

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՒ ԴԻՎԱՆԱՓԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

6 Մարտին ՀՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյանն Եւ Սուրիոյ արտաքին գործոց եւ սփիւռքի նախարար Ֆայսալ ալ Մըքտատ ուղերձներ փոխանակած են՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Սուրիոյ Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին առիթով: Նախարար Արարատ Միրզոյան իր ուղերձին մէջ յայտնած է, որ հայ-սուրիական յարաբերութիւնները խարսխուած են իրարու նկատմամբ յարգանքի ու վստահութեան ամուր հիմքերու վրայ, որ բազմիցս արտայայտուած է դժուարին իրավիճակներու մէջ երկու ժողովուրդներու եւ պետութիւններու՝ իրարու նկատմամբ ցուցաբերած մարդասիրական եւ բարոյական աջակցութեամբ: Նախարարը նաեւ ընդգծած է սուրիահայ համայնքի առանձնայատուկ դերակատարումը՝ որպէս բարեկամութեան աներկեր կամուրջ երկու երկիրներու եւ ժողովուրդներու միջեւ: ՀՀ ԱԳ նախարարը յայտնած է, որ հայ-սուրիական բարեկամական յարաբերութիւնները հետագայ տարիներուն աւելի պիտի ընդլայնուին եւ պիտի ամրապնդուին: Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆայսալ ալ Մըքտատ, յղելով իր ջերմագին շնորհաւորանքները ՀՀ ԱԳ նախարարին, դիտել տուած է, որ մեր երկու երկիրներուն միջեւ բարեկամական յարաբերութիւնները տարբեր ոլորտներու մէջ ունեցած են շարունակական զարգացում: Սուրիական կողմը պատրաստակամութիւն յայտնած է առաւել խորացնելու հայ-սուրիական յարաբերութիւնները եւ ամրապնդելու պատմական կապերը՝ ի շահ երկու բարեկամ ժողովուրդներու եւ երկիրներու:



Հ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՒ ԴԻՎԱՆԱՓԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՍՈՒՐԻՈՅ ՀՀ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԱԾ Է ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԳՐԱՆ

6 Մարտին, Հայաստանի Հանրապետութեան եւ Սուրիոյ Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին առիթով, Սուրիոյ մէջ ՀՀ դեսպան Տիգրան Գեորգեանն ու դեսպանութեան անձնակազմը այցելած են Սուրիոյ Խորհրդարան եւ հանդիպում ունեցած են Խորհրդարանական Սուրիա-Հայաստան Բարեկամութեան Խումբի անդամներուն հետ՝ խումբի նախագահ ղոկտ. Լիւսի Իսկէնեանի գլխաւորութեամբ:



Շնորհաւորելով ներկաները, ՀՀ դեսպանը յայտնած է, որ հայ-սուրիական յարաբերութիւնները խարսխուած են փոխադարձ յարգանքի ու վստահութեան ամուր հիմքերու վրայ, ինչ որ բազմիցս արտայայտուած է դժուար իրավիճակներու մէջ երկու ժողովուրդներու եւ պետութիւններու իրարու նկատմամբ ցուցաբերած մարդասիրական եւ բարոյական աջակցութեամբ: Ան նաեւ ընդգծած է, որ Հայաստան մեծապէս կարելի է Սուրիոյ Խորհրդարանին կողմէն Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումն ու դատապարտումը, որոնք դարձան հայ եւ սուրիացի ժողովուրդներու համերաշխութեան մեկայլ վկայութիւն: Հանդիպումի ընթացքին դեսպան Տ. Գեորգեան սուրիական կողմին փոխանցած է ՀՀ ԱԺ-ի փոխնախագահ, Հայաստան-Սուրիա միջխորհրդարանական բարեկամութեան Խումբի ղեկավար Իշխան Սաղաթէլեանի՝ 24 Ապրիլին Հայաստան այցելելու մասին նամակ-հրաւերը: Դոկտ. Լիւսի Իսկէնեան բարեկամութեան Խումբի անունով շերտօրէն շնորհաւորած է ՀՀ դեսպանը եւ դեսպանութեան ողջ անձնակազմը՝ երկու բարեկամ երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման յրբեւեանին առիթով, պատրաստակամութիւն յայտնելով Հայաստանի իրենց գործընկերներուն հետ միատեղ ջանքեր գործադրել՝ Խորհրդարանական դիւանագիտութեան ոլորտէն ներս գործակցութեան հետագայ զարգացման եւ ընդլայնումին համար:

ՀՅԴ 34-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԱԿՄՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԸՆՏՐԵՑ ԲԻՐՈՅԻ ՆՈՐ ԿԱԶՄ

8 Մարտ 2022-ին Հայաստանի մէջ գումարուած ՀՅԴ 34-րդ Ընդհանուր ժողովը աւարտեց 28 Փետրուարին ընթացք առած իր աշխատանքները: Ժողովին օրակարգը կը բխեր հայրենիքի եւ հայութեան առջեւ ծառայած ներագաջային, միջագաջային եւ տարածաշրջանային մարտահրաւերներէն, որոնց շուրջ ծաւալեցան խորքային քննարկումներ. ճշդուեցան յաջորդ քառամեակի ՀՅԴ քաղաքական ուղեգիծն ու ռազմավարութիւնը եւ տրուեցան որոշումներ՝ Հայ դատի, արտաքին եւ ներագաջային ուղղութիւններով աշխատանքներու, քարոզչական եւ տնտեսական քաղաքականութեան վերաբերելով:



Ժողովը քննեց եւ գնահատեց ընթացաւարտ ՀՅԴ Բիւրոյի եռամեայ գործունեութիւնը, ներկազմակերպական խնդիրներն ու կատարուելիքները:

Ընդհանուր ժողովը իր օրակարգը սպառելէ ետք ընտրեց կուսակցութեան բարձրագոյն մարմին՝ Բիւրօն:

- ՀՅԴ Բիւրօն իր անդրանիկ կիստին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընտրեց Յակոբ Տէր Խաչատուրեանը:
- ՀՅԴ Նորընտիր Բիւրոյի անդամներն են՝
- Վիգէն Բաղումեան (Իրան)
- Դաւիթ Իշխանեան (Արցախ)
- Արսէն Համբարձումեան (Հայաստան)
- Կիրո Մանոյեան (Հայաստան)
- Մկրտիչ Մկրտիչեան (Լիբանան)
- Խաժակ Մկրտիչեան (Ամերիկայի Միացեալ Նահանգներ)
- Արմէն Ռուստամեան (Հայաստան)
- Յովսէփ Տէր Գեորգեան (Երրոպա)
- Ռաֆֆի Տոնապետեան (Զանաւա)
- Մուրատ Փափազեան (Երրոպա):

ՀՅԴ Հանրային Կապերու Գրասենեակ
 8 Մարտ 2022
 Դիլիջան

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԸ ՆԻԹԱՊԵՍ ԿԸ ԳՆԱՀԱՏԵ ՌԻՍՈՒՅԻՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ուսուցչաց տօնին առիթով, որ կը գուզադիպի 9 Մարտին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց Լիբանանի եւ Սուրիոյ ուսուցիչներուն: Այս առիթով, Հայրապետը նիւթական օժանդակութիւն կատարեց Լիբանանի (662) եւ Սուրիոյ (400) անխտիր բոլոր վարժարաններու ուսուցիչներուն: Նորին Սրբութիւնը շեշտեց, որ յիշեալ երկիրներուն դիմագրաւած տնտեսական տագնապին լոյսին տակ, մեր կարիքաւոր ընտանիքներուն առջնօրէն, հրամայական է յատուկ ուշադրութիւն ընծայել մարդակերտումի եւ հայակերտումի առաքելութեան լծուած մեր ուսուցիչներուն: Յայտնեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, հետեւողական կերպով, ընկերային ծառայութեան ճամբով կ'օժանդակէ համայնքային կառոյցներուն եւ կարիքաւոր ընտանիքներուն:



Խմբագրական

ԿԻՆԸ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սուրիական պատերազմը պատճառ դարձավ, որ ոչ միայն համայնքի ազգային կեանքին, այլև սուրիական ընկերության մեջ պետական մակարդակով վերանայում մը ըլլայ կնոջ դերին ու բարեփոխումներ արձանագրուին այս առումով:

Յատկապէս նկատի ունենալով այդ մարդոց թիւի նուազումը գաղթին հետեւանքով, սուրիական ընկերության մեջ աշխատանքային տարբեր ոլորտներու մեջ սկսան ներառուիլ նախկին տարիներուն հետ բաղդատած աւելի մեծ համեմատութեամբ կիներ:

Սուրիոյ խորհրդարանէն ներս, վերջին ընտրութիւններուն, ներառուեցան աւելի մեծ թիւով կին երեսփոխաններ, սակայն գործադիր իշխանութեան մեջ այդ փոփոխութիւնը չնկատուեցաւ: Նոյնպէս կանանց թիւի աճ արձանագրուեցաւ պետական տարբեր մարմիններու ընտրութեան պարագաներուն: Վերջին տարիներուն Սուրիոյ համալսարաններուն մեջ ներգրաւուեցան աւելի մեծ թիւով կին դեկաններ, դասախօսներ, վարչական պատասխանատուներ եւ այլն:

Աւելին. Սուրիոյ մեջ զգալի դարձաւ կիները աշխատանքի ոլորտ մղելու պետականօրէն մշակուած ծրագիր մը, որուն արդիւնքը կը տեսնենք վերջին տարիներուն կազմակերպուած տարբեր ցուցահանդէսներով: Կնոջ ներգրաւումը բազմապատկուեցաւ նաեւ բարեսիրական, առողջապահական տարբեր հաստատութիւններու մեջ:

Նպատակը թէ՛ երկրի տնտեսական ծանր պայմաններուն մեջ կիները աշխատանքի մղելու խթան էր՝ ընտանիքներու կենսամակարդակի պահպանման համար, թէ՛ ալ այդ մարդոց գաղթին հետեւանքով սուրիական ընկերության մեջ յառաջացած բացը գոցելն էր՝ կնոջ տարբեր ոլորտներու մեջ ներգրաւման ճամբով:

Տեղեկատուական, գիտահետազօտական, կրթական, վարչական եւ այլ մարզերու մեջ այսօր բազմապատկուած է կին պաշտօնեաներու, պատասխանատուներու թիւը՝ նախորդ տասնամեակին հետ համեմատած:

Սուրիահայ համայնքի կեանքին մեջ եւս նոյնն է պատկերը: Ազգային, ուսումնակրթական, տեղեկատուական տարբեր ասպարեզներու մեջ կիներուն թիւը նկատելի դարձած է:

Այս բոլորը ոչ թէ յառաջադէմ ըլլալու ցուցանիշ է միայն, այլեւ՝ ընկերության մեջ հաւասարակշռութեան պահպանման եւ տագնապներու յաղթահարման գործընթացին մեջ սեռերու դերերուն հաւասար բաշխման կարելիութեան ստեղծում:

Այդուհանդերձ կնոջ մասնակցութեան ընդլայնման կողքին, մտայնութիւններու փոփոխութիւնն ալ կարեւոր դեր ունի՝ կնոջ կարծիքը տղամարդու կարծիքին համահաւասար ըմբռնումով ընդունելու մտային սահմանափակումը յաղթահարելու համար: Առանց այդ սահմանափակման վերացման, կնոջ մասնակցութեան քաջալերանքը կը նմանի յառաջանալու սրընթաց վագրին մեջ մտնելու, բայց այդ վագրէն ետ մնալու յոռի երեւոյթին:

«Գ.»

Երկուշաբթի, 7 Մարտ 2022-ին, «Մայատին» պատկերասփիւռային կայանը հարցազրոյց ունեցաւ Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ Մըքտատի հետ:

Հարցազրոյցին ընթացքին նախարար Մըքտատ շեշտեց, որ Սուրիա կարողութիւն ունի խորայելեան յարձակումներուն դէմ դնելու եւ Դամասկոս կ'որոշէ, թէ երբ պիտի հակադարձէ՝ աւելցնելով, որ Իսրայէլ պետք է լաւ իմանայ, որ իր յարձակումներուն պատասխանը անպայման պիտի ստանայ:



Նախարարը այնուհետեւ յայտնեց. «Սուրիոյ դէմ մղուած համաշխարհային պատերազմը իր 11-ամեակը բոլորելու սեմին է: Կարելի է ըսել, որ Սուրիա ցարդ ամբողջապէս չազատագրուեցաւ, որովհետեւ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ տակաւին ներկայ են սուրիական հողերու վրայ՝ թրջական եւ ամերիկեան ուժերու կողքին, եւ կը շարունակեն թալանել սուրիական հարստութիւնները, ինչպէս՝ քարիւղը, ցորենը եւ այլն»:

Ապա ան եզրափակելով ըսաւ. «Պատերազմի 11 տարիներուն, Սուրիա պայքարեցաւ արեւմուտքի ոտնձգութիւններուն դէմ, հակառակ պարագային արեւմուտքը տարածաշրջանը իր ամբողջական հսկողութեան տակ պիտի առնէր»:

-Երկուշաբթի, 7 Մարտ 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ առաւօտեան ժամը 5:00-ին, Իսրայէլ օդային յարձակում մը գործեց Պէյրութի հարաւային բաժինէն Դամասկոսի վրայ:



Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը: Աղբիւրը աւելցուց, որ յարձակումին հետեւանքով արձանագրուեցան 2 զոհ եւ նիւթական բազմաթիւ վնասներ:

-Սուրիոյ Բարձրագոյն Կրթութեան եւ Գիտական Զետազօտութիւններու նախարարութեան հովանաւորութեամբ, 6 Մարտին բացումը կատարուեցաւ Հալէպի համալսարանի կեդրոնական գրադարանին մէջ գտնուող Ուսանողներու Սպասարկման Կեդրոնին: Կեդրոնի բացման նպատակն է ուսանողներուն մատուցել իրենց ուսման ընթացքին անհրաժեշտ բազմաթիւ ծառայութիւններ, ինչպէս գնահատանիչերու հաստատագիրներ, ուսման յետաձգման փաստաթուղթեր, ուսումնառութեան աւարտի վկայականներ եւ այլն, եւ պարզեցնել այդ բոլորին ընթացակարգերը:



-25 հալէպցի կանանց մասնակցութեամբ, 7 Մարտին Հալէպի մէջ մեկնարկը կատարուեցաւ տնտեսական, քաղաքական եւ հասարակական ցանցերու օգտագործման ոլորտներուն մեջ կանանց վերապատրաստման ծրագիրին, որ տեղի ունեցաւ Սուրիոյ ընկերային հարցերու եւ աշխատանքի նախարարութեան կազմակերպութեամբ, գործակցաբար «Կլոպըլ Լէսկուէճ» վերապատրաստման եւ թարգմանութեան հիմնադրամին հետ:



Դասընթացքը տեղի ունեցաւ նախարարութեան Հալէպի գրասենեակին մէջ:

Ծրագիրին նպատակն է վերապատրաստել կիները՝ հաղորդակցման հմտութիւններու, խօսքի, երկխօսութեան կառավարման, կանանց իրաւունքներու եւ պարտականութիւններու իւրացման, ինչպէս նաեւ իրենց հետ առնչութիւն ունեցող այլ հարցերու եւ օրէնքներու իրազեկման համար:

Լուրեր Հայաշխարհին

ԵՐՐՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՊԻ ՆՈՐ ԲԱՆԱԾԵԻՆ ԵՎ ԿՈՒՂՈՒՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ԴԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԼՂ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆՊՈՒԹԻՒՆԸ

Երրորդիդարանին մեջ շրջա- նառության մեջ դրուած է բանա- ձեւիւնախագիծ մը, որ կը դատապարտ- տէ Լեռնային Ղարաբաղի մեջ մշա- կութային ժառանգութեան ոչնչա- ցումը, ինչպէս նաեւ կոչ կ'ուղղէ Ատրպեյճանին պաշտպանելու Լեռ- նային Ղարաբաղի հայկական մշա- կութային ժառանգութիւնը:

դի 2347 (2017) բանաձեւին համա- ձայն, ապօրինի յարձակումները կրօնի, կրթութեան, արուեստի, գի- տութեան, ինչպէս նաեւ պատմա- կան յուշարձաններու վրայ կրնան գինուորական յանցագործութիւն ը- լլայ, եւ նման յարձակումներու հե- ղինակները պետք է պատասխանա- տուութեան ենթարկուին: Այսպի- սով՝ բանաձեւը խստօրէն կը դատա-

փաստահաւաքի առաքելութեան անարգել մուտքը: Բանաձեւը կոչ կ'ուղղէ Ատրպեյճանին նաեւ պաշտպանելու հայկական մշակու- թային ժառանգութիւնը Լեռնային Ղարաբաղի մեջ եւ անոր շրջակայ- քը՝ ամբողջութեամբ կատարելով Արդարադատութեան Միջազգային Դատարանի որոշումը, յատկապէս՝ գերծ մնալու հայկական մշակութա- յին ժառանգութիւնը ոչնչացնելէ կամ հայկական պատմական մշա- կութային ներկայութիւնը վերացնե- լէ կամ հայերու մուտքը արգիլելէ եւ այլն: Ատրպեյճանի եւ Հայաստանի կառավարութիւններուն բանաձեւով կոչ ուղղուած է, միջազգային հան- րութեան աջակցութեամբ, ապահո- վելու միջազգային իրաւունքի խախտումի բոլոր մեղադրանքնե- րուն արդիւնաւետ հետաքննու- թիւնը՝ մշակութային ժառանգութե- ան պաշտպանութեան հարցով եւ որեւէ յարձակումներու, ինչպէս 8 Յոկտեմբերի 2020-ին յարձակումին Շուշիի Սուրբ Ամենափրկիչ տաճա- րին վրայ:



կութային ժառանգութեան ոչնչա- ցումին մասին բանաձեւին մեջ ըսուած է, որ Լեռնային Ղարաբաղի 2-րդ պատերազմի ընթացքին ատըր- պեյճանական ուժերու կողմէն յար- ձակումի ենթարկուած են բազմա- թիւ կրօնական վայրեր, ինչպէս Ջրականի Սուրբ Աստուածածին եկեղեցին եւ Շուշիի Սուրբ Ամե- նափրկիչ տաճարը: Ընդգծուած է նաեւ, որ Հայտար Ալիեւի եւ աւելի ուշ անոր որդիին՝ Իլիամ Ալիեւի օրով Ատրպեյճանը ոչնչացուցած է մինչեւ 100 հայկական եկեղեցի, հա- զարաւոր խաչքարեր, տասնեակ հազարաւոր տապալաքարեր եւ մշակութային ժառանգութեան այլ առարկաներ Նախիջեւանի մեջ: Ըստ բանաձեւին, ասիկա կը վկայէ հայկական մշակութային ժառան- գութեան հաւանական ճակատագ- րին մասին նաեւ Լեռնային Ղարա- բաղի մեջ, քանի որ Ատրպեյճանի իշ- խանութիւնները կը հերքեն Նախի- ջեւանի շրջանին մեջ հայկական մշակութային վայրերու առկայու- թիւնը: Բանաձեւին մեջ շեշտուած է՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուր-

պարտէ Լեռնային Ղարաբաղի մեջ մշակութային ժառանգութեան ոչնչ- չացումը: Բանաձեւը ԻՒՆԵՍԿՕ-ին եւս կոչ կ'ուղղէ ամբողջութեամբ գնահա- տելու Լեռնային Ղարաբաղի մշա- կութային ժառանգութեան վիճակը գինեալ հակամարտութիւններու պարագային՝ մշակութային արժեք- ներու պաշտպանութեան մասին 1954-ի Հաագայի համաձայնութե- ամբ եւ հետեւելու բոլոր կողմե- րու համապատասխան առաջար- կութիւններուն, ինչպէս նաեւ կոչ կ'ուղղէ Եւրոպական Միութեան ցուցաբերելու համապատասխան աջակցութիւն: Բանաձեւը կը յորդորէ Հայաս- տանն ու Ատրպեյճանը լիովին գոր- ծակցելու միջազգային հետաքննու- թիւններու հետ եւ կատարելու իրենց պարտականութիւնները՝ 1954-ին Հաագայի պայմանագրութեան հա- մաձայն: Լեռնային Ղարաբաղի մեջ մշակութային ժառանգութեան ոչնչ- չացման մասին բանաձեւը Ատրպեյ- ճանին կոչ կ'ուղղէ գործակցելու ԻՒՆԵՍԿՕ-ին հետ՝ ապահովելու

ԱՐՃԱՆԻ ՄԷՋ ԹՇՆԱՄԻՆ ԽԱՆՏԱԾ Է ԶԻՆԱՊԱՐԱՐԸ՝ ԽՐԱՄՈՐԹ ՓԻՂԻՆ ՎՐԱՅ ԿՐԱԿ ԲԱՆԱԼՈՎ

8 Մարտին Երեւանի ժամով ժամը 23:00-ի սահմաններուն, Ար- ցախի Հանրապետութեան Ասկերա- նի շրջանի Խրամորթ գիւղի շրջանը թշնամին հերթականօրէն խախ-



տած է գինադադարը՝ 60 մմ. տրա- մաչափի ականանետէն 3 հատ ական արծակելով գիւղին ուղղութե- ամբ: Արցախի Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի ծառա- յութիւնէն յայտնեցին, որ հայկական կողմէն տուժածներ չկան: Զինադա- դարի խախտումին մասին հաղոր- դուած է Ռուսիոյ խաղաղապահ զօ- րակազմի հրամանատարութիւնը:


ԱՏՐՊԵՅՃԱՆ ԶԱՅՐԱՅԱԾ Է ՌՈՒՍԻՈՅ ԴԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂ ԱՆՈՒՍԻՈՒՄԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատրպեյճան, ըստ սովորութեան, քննադատած է Ռուսիոյ՝ Արցախի Հան- րապետութեան առումով Լեռնային Ղարաբաղ անուանումը օգտագործե- լուն համար: Յիշեց- նենք, որ Ռուսիոյ Պաշտ- պանութեան Նախարար- րութեան երեկուան ճե- պագրոյցին ընթացքին գերատեսչութեան ներ- կայացուցիչը յայտնած է, որ Սուրիան եւ Լեռ- նային Ղարաբաղը սնունդ եւ շտապօգնութե- ան ապրանքներ մա- տակարարած են Քիւեի եւ Չաբորժիի շրջաններու բնակչութեան: Ատրպեյճանական ՉԼՄ-ները եւ պաշտօնեաները գայրացուցած են Ռուսիոյ Լեռնային Ղարաբաղը իբրեւ առանձին պետական միաւորում անուանելը, ինքնիշխան պետութիւննե- րու կողքին:



ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱԿ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԽԻՍԸ

7 Մարտին «Հայաստան» դաշինքի պատգամա- ւորներ Վահէ Յակոբեան եւ Թադէոս Աւետիսեան հան- դէս եկան մամուլ ասուլիսով: Անոնք ամփոփեցին Ազ- գային ժողովի վերջին քառօրեան ու պատասխանե- ցին լրագրողներու հարցումներուն: «Մեր առաջնային հարցը տոյար-դրամ փոխար- ժեքի կայունութեան ապահովումն է», ըսաւ «Հայաս- տան» դաշինքի պատգամաւոր, տնտեսական հար- ցերու մշտական յանձնաժողովի նախագահ Վահէ Յակոբեան: Ան յայտնեց, որ որոշ տուեալներով օրական 6 հազար ռուս եւ ուքրաինացի քաղաքացիներ կու գան Հայաստան եւ իրենց հետ կը բերեն հիմնականօրէն ռուբլի, ուստի ՀՀ կառավարութիւնը պետք է ուշադիր ըլ- լայ, որ արտահոսք չըլլայ:



Վահէ Յակոբեան նկատեց, որ Հայաստան կրնայ կանգնիլ նաեւ հացահատիկի ապահովման հարցին դէմ յանդիման, նկատի ունենալով, որ Հայաս- տան հացահատիկը կը ներածէ Ռուքրանիայէն: Ան ընդգծեց, որ եթէ ուքրաինական հակամարտութիւնը երկարի, Ռուսիան սահմանափակումներ պիտի մտցնէ եւ մեր երկիրը պիտի կանգնի հարցի դիմաց: «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Թադէոս Աւետիսեան նկատեց, որ ռուս-ուքրաինական հակամարտութեան վտանգները ակնհայտ են: «Բայց կան նաեւ կարելիութիւններ Հայաստանի տնտեսութիւնը մեծցնելու, ներդրումներու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու եւ արտահանումը դէպի ԵԱՏՄ աւելցնելու», ըսաւ պատգամաւորը:

ՆՇԱՐ

ՈՐՊԵՍՉԻ ԶԿՐԿՆՈՒՒ ՍՏԱՊԱՏԻՐ «ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ»-Ը



Ս. Մահտեղեան

Պահ մը հեռանալը աշխարհի ուշադրութիւնը կլանող՝ Ուքրանիոյ տագնապէն, ու (առանց մոռնալու ծաղկեփունջ մը նուիրել Յայ Կնոջ՝ իր տօնին առիթով), մեր աչքերը ուղղենք մե՛զ տագնապեցնող՝ Յայաստանի ու Արցախի իրադարձութիւններուն:

Յստակ է, որ անցնող իւրաքանչիւր օր քիչ մը աւելի՛ բացայայտ կը դարձնէ, թէ մեր ժողովուրդին եւ իշխանութեան հայեցակէտերուն միջեւ վիճիւր որքա՛ն կը խորանայ. Կարծեք թէ ո՛չ միայն հասած ենք անոնց միջեւ անկամարջելի վիճակի, այլ մեր ազգի կամուրջները կը քանդուին մեր պատմութեան, մշակոյթի եւ հայկական էութեան հետ:

Խորքին մէջ, ստեղծուած է խուլերու խօսակցութիւն մը: Անկախ այսօր ըսածէն վաղը-միւս օր ետդարձ ընելու եւ ինքզինք մի՛շտ ճիշդ ու արդար համարող իշխանաւորներու ընթացքէն, Յայաստանի, Արցախի եւ Սփիւռքի գանգուածներուն համար այլեւս կասկած վեր է, թէ երկրին շոգեկառքը կը սուրայ դէպի նորանոր կործանումներու դաշտեր: Եթէ փորձենք եղածը ներկայացնել երեւակայական փոխասացութեան մը պատկերով, կը ստանանք մօտաւորապէս հետեւեալը:

Ատրպէյճան գրեթէ ամէն օր յարձակումներ կը գործէ Արցախի եւ Յայաստանի սահմանամերձ գօտիներու վրայ: Նորագոյն դաշտերը եղան Խրամորթն ու Երասխը, տուհնք գոհ, վիրաւոր, աշխատանքի արգելքներ...

Իշխանութիւնը կը հրճուի. «Մենք խաղաղութեան շրջան պիտի բանակը»:

Ատրպէյճան բանիւ եւ գործով կը սպառնայ բռնագաղթի մղել Արցախի մնացեալ շրջաններու հայութիւնը:



«Խաղաղութիւն կը հետապնդենք»-ով ինքզինք խաբողները կը մտածեն. «Մեզի ի՛նչ՝ Արցախը: Անոր բռնէն ազատած ենք, թող ռուս խաղաղապահները մտահոգուին»:

Ատրպէյճանի մէջ հայ գերիներ պարբերաբար կը դատուին ու երկարատեւ բանտարկութեան վճիռներ կը ստանան:

Երեւանի իշխանաւորներուն համար, «հայ գերիներու հարց գոյութիւն չունի»: Կը մտածեն՝ թող եւրոպացիք եւ ռուսերը միջամտութիւններ ընեն (եկուր տէ՛ս, որ անոնք աւելի քան տասը օրէ ի վեր Ուքրանիայով զբաղած են):

Թուրքիա եւ Ատրպէյճան ո՛չ միայն գործի անցած են «Շուշիի համաձայնագիր»-ին պայմանները մէկ ամ մէկ իրականացնելու նպատակով, այլ կը յաւակնին, Արցախն ու Սիւնիքը նուաճելէ անդին նայելով՝ հասնիլ Երեւան:

Յայաստանի իշխանաւորները կը պնդեն. «Մենք խաղաղութիւն կը հետապնդենք»: Գործի անցնելով՝ ազերի պատգամաւորներ կ'արժանացնեն սիրալիր ընդունելութեան, անոնց առիթ կու տան, որ Երեւանի պարսկական մզկիթը ազերիական հռչակեն, լուռ սպառնալիք ուղղեն, որ շուտով հոն պիտի գան աղօթելու (իմանալ՝ մտադրած են Երեւանն ալ գրաւել): Մեր խաղաղասեր իշխանաւորները չեն ցանկար նեղացնել ազնիւ հիւրերը, հոգ չէ թէ անոնք վրդովումի կը մատնեն նա՛եւ մեր բնական դաշնակիցներէն՝ Իրանը:

Խորհրդարանական ընդդիմադրութիւնը բանաձեւ կը բերէ, որպէսզի «Շուշիի համաձայնութիւն»-ը դատապարտուի ժողովուրդին ընտրած պատգամաւորներուն կողմէ: Փոխանակ նման բանաձեւ միաձայնութեամբ որդեգրելու (աւելի քան երկու տարի առաջ, իսկապէս ուրախացանք, երբ ամերիկեան խորհրդարանի երկու տունները ինչպիսի մեծամասնութեամբ որդեգրեցին Յեղասպանութիւնը ճանչցող օրինագիծը), «պայմանագրեալ» խմբակը կը խափանէ նման քայլ, յատկեալ փաստ մը արձանագրելով, թէ որո՛ն հետ պայմանաւորուած է: Կը մտածեն. «Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կարելի է նեղացնել թուրք-ազերիները, որոնք հետ խաղաղութեան էջը պիտի բանակը»:

«Շուշիի համաձայնութիւն»-ը դատապարտել մերժող «պայմանագրեալները» չեն ուզեր տեսնել, չեն ցանկար, որ ժողովուրդն ալ տեսնէ, թէ Թուրքիա եւ Ատրպէյճան ինչպիսի՛ նախապայմաններ դրած են Յայաստանի հետ խաղաղութեան համար: (Արցախի խորհրդարանը բաց աչքերով կը տեսնէ իրականութիւնը): Կոյր ու խուլ կը ձեւանան Արցախը վերջնականապէս կու տալու, Սիւնիքէն սկսեալ՝ Յայաստանն ալ պատառ-պատառ «ճաշակելու», Յեղասպանութեան մեր պահանջներուն հարցը փակուած տեսնելու, գանոնք ամբողջով միջազգային համաձայնագիրները ջնջուած տեսնելու, ընդհակառակն՝ խորհրդայիններուն օրով ի վնաս Յայաստանի կընքուած պայմանագիրներ վերականգնելու (եւ բազում) նախապայմաններու դիմաց, եւ մանկական միամտութեամբ կ'աղաղակեն. «Մենք առանց նախապայմանի կը բանակցինք Թուրքիոյ հետ»: Բանակցութեան նիստերը իրարու կը յաջորդեն՝ նոր «մտայնութիւնը» ժողովրդականացնելու քարոզչութիւնը կը ծաւալի, ու մինչ թուրք բանակցողը Պաքու կը վազէ՝ միացեալ

ծրագիրները յառաջ տանելու խանդով, մեր իշխանութեան ներկայացուցիչները կը պատրաստուին Անթալիա երթալու՝ «խաղաղութիւնը նաեւ Անթալիայէն կ'անցնի» մտածելով: (Եւ կը գարմանա՞ս, հա՛յ մարդ, թէ Յեղասպաններուն ժառանգորդ եւ հաւատարմատար Երտողան մը Յայաստանէն դրական կշաններ կը տեսնէ... շնորհիւ «երկաթե մուրճ» ձեռք բերած վարչապետին եւ գործակիցներուն):

Տնտեսագետներ եւ բանիմաց մարդիկ բազում ահագնագրեր կը հնչեցնեն, որ ներկայ պայմաններուն մէջ Թուրքիոյ ու Ատրպէյճանի հետ սահմաններու «առանց նախապայմանի բացում»-ը նոր աղետներու պիտի հասցնէ Յայաստանն ու տնտեսութիւնը, պատուհաս պիտի ըլլայ հայ գիւղացիին եւ ամբարտաւանին: Իշխանաւորները կը հաւատան, որ խաղաղութեան էջը բանակով՝ Յայաստան պիտի բարգաւաճի, տնտեսական գարգացում պիտի ապրի (առածը կ'ընէ. «Մեր ծախողը մատները կը լիզէ»):

Խորհրդարանական ընդդիմադիրներ եւ արտախորհրդարանական իմաստուններ մտահոգ են, որ Արցախի երկրագործական տարածքներու կորուստէն, ապա նաեւ Ռուսիան եւ աշխարհը կլանած ծանօթ տագնապներէն ետք, Յայաստանի պարենաւորման հարցերը դժուարութիւններու առջեւ են, լուծումներ կը պահանջեն, արդարօրէն հարց կու տան, թէ իշխանութիւնը արդեօք ի՞նչ ծրագիր ունի: Նման հարցադրումներ լսող եւ հողատու ըլլալը չընդունող վարչապետը կը գայրանայ, իսկ իր խօսափողերը արհամարհանքով ժողովուրդին կը նետեն. «Ինչո՞ւ կը մտահոգուիք: Յոգ մի՛ ընէք՝ եթէ ապրուստի սղութիւնը դէպի վեր նոր ոստումներ կ'արձանագրէ: Ընդդիմադիրներուն մտահոգութիւնները անհիմն են: Մենք ամէն հարց կը լուծենք»:

Եւրոպայի հետ աշխարհը խոր մտատանջութեան մատնած գարգացումները համապատասխան ալիքներ կը բարձրացնեն Յայաստանի ու Արցախի մէջ, կը յուզեն նաեւ անոնց ելեւէջներուն հետեւող սփիւռքահայութեան միտքերն ու հոգիները: Իշխանութեան մօտիկ շրջանակներ հագիւ թէ կը քողարկեն «հին ճամբու ծրագիր»-ը, այսինքն՝ ձեւ մը գտնել, որպէսզի Յայաստան դուրս գայ ռուսական ազդեցութենէ եւ ապաւինի Արեւմուտքի հովանիին: Յարցը կը դրուի ռուսասիրութեան եւ ռուսամերժութեան, եւ ո՛չ թէ իրապաշտութեան, կարելի հաւաստակշռութիւն մը պահպանելու մօտեցումով (Չելենսքիի մը 10 օր բաւարար եղաւ, թէ որքա՛ն կարելի է վստահիլ գորակցական հաւաստիքներու, որոնք վերածուած են Ուքրանիան զէնքով օժտելու ճամբով՝ պաշտօնապէս կողոպտելու եւ շահադիտական լայնածիր մրցակցութիւններ իրականացնող ծրագիրներու բացայայտման): Յայաստանի «հեռատեսները» չեն ուզեր տեսնել, թէ Արեւմուտքին հետ գործակցութեան խորացման պատրանքը համագործ է «խաղաղասեր եւ առանց նախապայմանի բանակցող» Թուրքիոյ դիմաց կանաչ լոյս բանալու, որպէսզի ուղղակի եւ անուղղակի ձեւերով թափանցէ Յայաստան, գայն լաւագոյն պարագային վերածելու համար... թրքական վիլայեթի մը (կը յիշէ՞ք Յոֆն ու Վեստենենկը...):

Երեւանի իշխանաւորները նման մտահոգութիւններու կը պատասխանեն. «Ժողովուրդը մեզի տուաւ իր քուէն: Անկէ ետք թող որեւէ բանի չխառնուի, պետք չունի գիտնալու, թէ ի՞նչ կ'ընենք, ինչպէ՞ս կ'ընենք»: Ու կ'աւելցնեն. «Խաղաղութիւն եւ բարգաւաճում պիտի բերենք» (Վերջին օրերուն նոր հրճուանքի ալիք ալ կայ. Ռուսիայէն հոսանք մը կայ...):

...Մեր ժողովուրդը հաւանաբար չէ մոռցած, որ 44-օրեայ պատերազմին, Արծրուն Յովհաննիսեան անունով բանբեր մը ամէն օր գինք կը կերակրէր «Յաղթելու ենք» ու նման սուտերով: (Ըսելիք չունինք բոլոր այն «իմաստուններուն», որոնք կը յամառին ընկրմած մտալ նման խաբութեան թափօններուն մէջ. չէ՞ որ կարգ մը ախտեր անդամներէն են, իսկ «չհասկցողին բան հասկցնելը անկարելի առաքելութիւն է»): Վաղը, «խաղաղութիւն պիտի բերենք» ու «տնտեսական բարգաւաճման էջը պիտի բանակը»-ն ալ պիտի ունենան «յաղթելու ենք»-ին հնչեղութիւնը:

Սակայն պիտի հասնի նաեւ այն օրը, երբ գանգուածը պիտի տեսնէ, թէ ընդդիմադիրները (անցնիք անհատներու ոլորտէն անդին) արդարացի էին, ճիշդ այնպէս՝ ինչպէս ատենին արդարացի էին խորհրդային-համայնակար կարգերը քննադատող ու խարանող «այլախոհները», սակայն յետոյ եկաւ վերանկախացման եւ իմաստնասալու ճամբուն յարելու շրջանը:

Կասկած պէտք չէ ունենալ, որ մեր ժողովուրդը դարձեալ՝ պիտի վերագտնէ իմաստնասալու ուղին, պիտի խափանէ Յայաստանի կործանումը, պիտի վերականգնէ իրաւունքի եւ բոլոր արդար պահանջներուն իրականացման կամքը, պիտի գործէ ըստ այնմ: Մեր այլասերումը չի կրնար հասած ըլլալ ինքնակործանման հոգեվիճակի: Փաստ՝ մեր անջնջելի պատմութիւնը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Հանգուցեալ
ԿԱՐՕ ՔԻՒՐԸԼԵԱՆ
Յանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 13 Մարտ 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Յալեպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Տիգրանեան «Սահակ Նալպանտեան» սրահէն ներս:



ՓՐՈՖ. ՄԱՐԱԼ ՍԱՐԳԻՍ. «ՅԱԶՈՂ ԸԼԼԱՆՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ ՈՒՍՈՒՄԴ, ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԴ ՈՒՐԻՇԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԷՋ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ»

«Կանանց Միջազգային Solu»-ին առիթով, «Գանձասար» մտերմիկ հանդիպումներ պիտի ունենայ զանազան մարզերու մեջ գործող հայուհիներու հետ, որոնք հակառակ երկրի դժուար պայմաններուն, իրենց ուսման եւ աշխատանքին ձգտումը կենքի կը կոչեն՝ զուգահեռաբար իրենց ընտանեկան պարտավորութիւններուն: Ստորեւ կը ներկայացնենք հարցազրոյցներու առաջին բաժինը.

Փրոֆ. Մարալ Սարգիս իր պատանութեան օրերէն աշխատասեր աշակերտուի է եղած է: Ներկայիս ան փրոֆեսոր է, Հայկական համալսարանէն ներս դասախօս եւ այլազան պաշտօններ կը վարէ: Աւարտած է Հայկական Պետական Համալսարանի Շինարարական երկրաչափութեան փոխան ճիւղը: 4 տարի պաշտօնավարած է Տեղական Կառավարման Նախարարութեան թեքնիք ծառայութեան բաժնին մէջ, ապա իր տարբեր աշխատանքներուն եւ ուսման մէջ առաջնակարգ ըլլալուն բե-

Ֆրանսա՝ յաւելեալ ուսում ու փորձառութիւն ստանալու: 2008-ին կրկին վերադարձայ Սուրիա: 2010-էն 2013 Ռաքքայի «Ֆուրայթ» Համալսարանէն ներս Նշանակուեցայ Շինարարական երկրաչափութեան Համալսարանի փոխդեկան, զուգահեռաբար այստեղ դասաւանդութեան:

2014-էն 2018 փոխդեկան՝ Հայկական Շինարարական երկրաչափութեան Համալսարանի: Այդ տարիները շատ դժուար էին աշակերտութեան համար, տագնապի օրեր էին: Ուստի աշխատանքս ստանձնելով փորձեցի առաւելագոյն չափով օգտակար դառնալ անոնց:

2018-էն մինչեւ օրս կը վարեմ Հայկական Պետական Համալսարանի բարձրագոյն ուսման բաժնի փոխնախագահի պաշտօնը:

Երբ հարցուցիք դրկտ. Մարալին, թէ որքանով դժուար է կնոջ մը համար Սուրիոյ մէջ լաւ դիրքեր նուաճելը, բաղդատմամբ տղամարդուն, ան պատասխանեց.



րումով, պետութիւնը զինք ընծայած է զանազան առիթներ, ինչպէս Հայկական համալսարանէն ներս դասախօսելու, ապա իր ուսումը կատարելագործելու Ֆրանսա: Հին 6 տարի բարձրագոյն ուսման հետեւելով ձեռքբերած է դոկտորականի եւ փրոֆեսորի կոչումներուն արժանանալով վերադարձած է Սուրիա՝ փոխանցելու իր ողջ ուսումնաւորականութիւնը նոր սերունդին ու ծանայելու իր երկրին:

«Կառավարութիւնը ժրջաններուն տեսարար առիթներ կ'ընծայէ: Ֆրանսայէն վերադառնալէս՝ 2002-էն, ի վեր պէտք էր իբր փրոֆ. պաշտօնավարէի համալսարանէն ներս: Մինչեւ օրս դասախօս եմ այնտեղ: Այս միջոցին միայն դաս տալով չէի բաւարարուեր, այլ կ'աշխատէի ուսումնական վաստակահարստացնել, յառաջանալ: Այս իսկ պատճառով 2004-ին եւ 2006-ին դարձեալ կարճ ժամանակներով մեկնեցայ

«Ինչպէս գիտեք, Միջին Արեւելքի մեր երկիրներուն մէջ կինը երկրորդ մակարդակի վրայ է, որուն պաշտօնի թեկնածու գտնելու համար միշտ տղամարդուն կ'ուղղուին հայեացքները: Հակառակ այս իրականութեան, վերջերս Սուրիոյ նախագահէն ուղղութիւն տրուած է, որ կիները իրենց որոշ տոկոսով ներկայութիւն ըլլան իւրաքանչիւր մարզի մէջ, հետեւաբար իգական սեռին աւելի առիթներ տրուեցան համալսարանի ու զանազան մարզերու մէջ:

Եթէ պահ մը պատմութեան վերադառնանք, կը տեսնենք, որ հայերս դարերու ընթացքին շատ տառապանքներ կրած ենք: Մեր մասկիներն ու պայիկները Տեր Զօրէն շատ դժուարութեամբ հասան, բայց հակառակ անոր կրցան հիմնել իրենց ընտանիքներն ու զանազան մարզերու մէջ լաւ դիրքերու հասնիլ: Բաղդատմամբ անոնց, ինչո՞ւ ներ-

կայիս պիտի չկրնանք իրենց նման ու աւելի յառաջանալ, մասնաւորապէս մեզի առիթներ շնորհուած են:

Վերջին շրջանին ու մինչեւ օրս բոլորս ալ տագնապալի պայմաններու մէջ կ'ապրինք, բայց ըստ իս, միշտ լաւատես պէտք է ըլլանք ու յոյս ներշնչենք մեր շրջապատին: Ես այդպէս կը վարուիմ համալսարանի աշակերտներուս հետ, որոնք իրենց կարգին նոյնպէս բարձր տրամադրութիւն կը փորձեն սփռել իրենց շուրջը: Ահա թէ ինչո՞ւ, երբ աշակերտները «դրկտ. Մարալ» անունը լսեն ժպիտ մը կ'ուրուագծուի իրենց դէմքին վրայ, որովհետեւ

պատին ու կը վայելենք անոր վստահութիւնը: Մենք՝ 4 քոյրեր փրոֆեսոր ենք, զիրար կը քաջալերենք, կը սիրենք ուսումնաւոր աշխատանքը: Եթէ սիրես ըրածդ, անկասկած կը հասնիս ձգտումիդ: Ես փոքր գրասենեակովս, ուսանողներովս, անոնց իմ հանդէպ ունեցած յարգանքով ու սիրովս անսահման ուրախ եմ»:

Փրոֆեսորը Կանանց Միջազգային տօնին առիթով բոլոր կանանց կը յորդորէ ըլլալ քաջ ու ինքնավստահ, ձգտիլ ուսման ու վկայական ստանալու եւ անդադար ստրկիլ ու զարգանալ:



ուսումնէն անկախ կրցած եմ լաւ բաներ ցանցելով անոնց մէջ սիրաշահիլ զիրենք:

Հայը ինքզինք փաստած է ուսումի, արուեստի ու արհեստի մէջ, յատուկ ու փայլուն հետք ձգելով զարգացուած է իր շրջապատը»:

Դրկտ. Մարալ հոգեկան գոհունակութիւն կ'առթէ ուսանողներուն օգտակար դառնալով: Անոնք իր զաւակներն են: Դոկտորը ուսման կողքին դաստիարակչական աշխատանք կը տանի:

Երբ հարցուցիք, թէ ի՞նչն է զինք խթանողը, ան պատասխանեց.

«Կրթութեան մեծ ազդեցութիւնն է այս: Եթէ ծնած ես ընտանիքի մը մէջ, որ միշտ կը նուիրուի, կու տայ անսխալադարձ, հիւրասէր է, ուսումը սիրող... դուն ալ իրենց ուղիով, զիրենք իտեալ դարձնելով կը շարունակես ուղիդ: Տան կրթութիւնը եւ աշխատանքը մարդս կը յառաջացնէ, միեւնոյնատեմ, մարդ արարածը բնագործ կը փափաքի աւելի լաւին ձգտիլ: Պաշտօնը չէ, այլ աշխատանքն է, որ կը փնտռենք: Օգտակար կը դառնանք մեր շրջա-

«Այս դարուն տղամարդն ու կինը համահաւասար են: Մեր մտքէն հանելք անհաւասարութեան բարդոյթը: Մեր կրօնքը կը հիմնուի հաւատք, յոյս, սէր երրորդութեան վրայ: Ուստի երբ զինուած ըլլանք անոնցմով, կը յաջողինք ու կը տարածենք սէրն ու յոյսը: Այդ թէ կին մարդու համար շատ կարեւոր է աշխատանքը, որ մեզ կը հասցնէ լաւ դիրքերու, բայց չաճապարենք արագ հասնելու անոր: Ամէն բան իր ժամանակը ունի, եթէ արժանի ենք պաշտօնի մը ու կ'արդարացնենք զայն, կը ստանձնենք այդ պաշտօնը բնականաբար, այլապէս կը մերժենք զայն, որովհետեւ մարդն է որ պաշտօնն ու աթոռը կը գարդարէ, ոչ թէ՛ հակառակը:

Ի վերջոյ մարդ անհատին հարստութիւնը ուրիշին մատուցած ծառայութեան մէջ է: Միշտ պիտի տաս նուիրաբար, յաջող անձ մը ըլլալու գաղտնիքը ուսումնոր եւ ստրկածի ուրիշին փոխանցելու մէջ է»:

(Հար. 1) Հարցազրոյցը վարեց Սեւանայ Հալլաճեան

ԼԵՉՈՒԻ ՅՈՒՅԱՅԱՆԴԵՍ



Խորեն Զինյ, Պերթոլեան

Լեզուն խայթող, վիրաւորող
Թոյն սրսկող, որոմ ցանող
Բաժանումի ճեղքեր բացող
Միտք պղտորող, բարին ժխտող:

Լեզուն անսանձ, նետ արձակող
Չարադաւան, արագ խօսող
Փշաբեր է, սիրտեր խոցող
Չրպարտութեան գործիք դարձող:

Լեզուն կեղծ է սուտ յօրինող
Խաբկանքներով հաճոյացող
Օրէնք խախտող, շուտ սայթաքող
Յանցանքներու բոյն նկատուող:

Լեզուն սուր է պատերազմող
Անվերջ վեճին հիմը դնող
Բամբասանքի նիւթ հնարող
Գլխապտոյտ միշտ պատճառող:

Լեզուն վտանգ սպառնացող
Թակարդ լարող, որս փնտռող
Վարպետ մատնիչ, դաւաճանող
Սուտը իրաւ նկարագրող:

Լեզուն վատ է ցեխարձակող
Կարծր սիրտէն քարեր գտնող
Անխնայ է եւ քարկոծող
Ներաշխարհներ ալեկոծող:

Լեզուն վայրի՝ հրեշացող
Գաղտնիքները բացայայտող
Տուներ քանդող, կապեր խզող
Սուր քննադատ, աւեր գործող:

Ճկուն լեզուն կապ հաստատող
Ճիշդ ժամկետին միջամտող
Իմաստութեամբ ճարտար շինող
Բարի Տիրոջ փառքը պատմող:

Անուշ լեզուն սերտ ցաւակցող
Աւետաբեր արձագանգող
Օծուն սրինգ սաղմոս երգող
Հմուտ բժիշկ դարման ճարող:

Առողջ լեզուն կշռադատող
Խօսքը մաղէ լաւ անցընող
Պատասխանը խելքով վճռող
Կեղծը խստիւ դատապարտող:

Խօսուն լեզուն հաղորդակցող
Չափաւոր է, սանձ ունեցող
Հիւթեղ պտուղ, կանթեղ վարող
Արթուն խիղճին հաշիւ տուող:

Շինիչ լեզուն լուսաբանող
Աղի նման կեանք համեմող
Մեղեղի է գոհաբանող
Դրականը գնահատող:

Սիրոյ լեզուն պարզաբանող
Արդարութեան խօսնակ եղող
Տրտմածներուն շտապ հասնող
Հոգեշահ է, հանգչեցնող:

Օրինեալ լեզուն գանձեր բաշխող
Միւռոնաբոյր բարեխօսող
Յիսուսասեր վկայ դարձող
Զաղցրաբարբառ սեր քարոզող:

Թուրքիոյ նուրջ

ՔՈՒԹՈՒՄՈՒՆ «ԹՈՒՐԷԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՍՐԱՎՈՒԹԵԱՆ ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵՆԻ ՄԱՍՆԻԿՆ Է»

Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ Չարագում» կուսակցութեան փոխ-նախագահ Նուրման Զուրթուլմուշ յայտարարած է, որ Թուրքիան ներկայ է համաշխարհային ուժերու պայքարներու բոլոր «թատերաբեմներուն վրայ»:



«Չինաստանի, Եւրոպայի ու Արեւմուտքի պայքարի ամենակարեւոր ճակատներէն մեր գիտցած Առաջաւոր Ասիան ու յատկապէս Կովկասը պիտի ըլլան: Այս իմաստով Թուրքիան Կովկասի հաւասարակշռութեան անփոխարինելի մասնիկն է»:

Քուրթուլմուշ, շեշտած է, որ Թուրքիան զգալի աջակցութիւն ցուցաբերեց Ատրպէյճանին Ղարաբաղը «ազատագրելու եւ այնտեղ նոր հաւասարակշռութիւն հաստատելու» գործընթացին: Ապա աւելցուցած է.

«Թուրքիան վճռական է ու պատրաստ է նաեւ նախաձեռնել Ռուսիոյ, Իրանի, Թուրքիոյ, Ատրպէյճանի, Վրաստանի ու Հայաստանի մասնակցութեամբ վեցակողմ հարթակի միջոցով Կովկասի յատկապէս Հարաւային Կովկասի խաղաղութեան եւ անդորրի մթնոլորտի ստեղծումը: Կովկասի մէջ հաւասարակշռութիւնը առանց Թուրքիոյ կարելի չէ ապահովել»:

ԻՄ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆՍ...

Սկիզբ՝ էջ 7

փորձեցի ըսել, որ լռեն, որովհետեւ ահա կը տեսնեմ, որ մեր օրիորդը վեր կ'ելլէ եւ եթէ մեզ այս վիճակին մէջ գտնէ, հաւանաբար բոլորս ալ լաւ ծեծ մը ուտենք, որովհետեւ օրիորդ Անահիտը, մեր հայերէնի ուսուցչուհին շատ խոժոռ էր եւ խիստ: Յետոյ պիտի հաստատեի, դպրոցէն ետքի մեր բարեկամութեան ընթացքին, որ օրիորդ Անահիտին դէմքը պարզ ապէս ժպտուն էր, բայց ինք շատ ազնիւ եւ համբերատար անձ մըն էր:

Երբ տեսայ, որ չեմ կրնար ձայնս իրենց հասցնել, բարձրացայ նստարանին, յետոյ գրասեղանին վրայ եւ ձայնս ձգած պոռացի.

-Լռեցէ՛ք... անիծեա՛լ ըլլաք...

Վերջին երկու բառերս արտասանած ընթացքիս օրիորդ Անահիտը արդէն դասարանին դրան մէջ էր եւ աշակերտներուն ձայնը, դանակով կտրուածի պէս, դադարէր էր. իմ «Անիծեա՛լ ըլլաք»ս յստակ ու շատ բարձր հնչեց, մինչ էս ալ կը նայէի օրիորդ Անահիտի դէմքին, որ տարօրինակ արտայայտութիւն մը ստացեր էր բառերս լսելով:

Սարսափահար, կամացուկ մը ետ վար իջայ նստարանէն, միտքովս ապրելով գալիք պատիժներս, որոնք հաստատապէս երկու պիտի ըլլային. նախ հիմա, հոս, ապա՝ տունը, մօրս շատ աւելի ծանր պատիժը: Չէի հասկնար թէ ինչպէ՛ս այդքան արագ ամէն բան կը հասնէր մօրս ականջին՝ հագիւ դպրոցէն տուն դառնալի, պատիժը կը սպասէր զիս: Եւ ամէն օր տարբեր բաներու համար պատիժ ունէի՝ բարձր խօսեր էի, շատ վագվագ էի, տասի փոխարէն իննուկէս ստացեր էի ...

-Նստեցէ՛ք...,- ըսաւ օրիորդ Անահիտը:
Բոլորս նստանք. կը զգայի, որ

բոլորն ալ իմ պատիժիս կը սպասեն:

-Բացէ՛ք գիրքերը, նոր դաս...

Այդ օր պատիժ չունեցայ ո՛չ դպրոցը, ո՛չ ալ տունը: Եւ մեծ ուրախութեամբ մոռցայ այդ բոլորը:

Տարիներ ետք, երբ մտաբերեցի այս դէպքը, նախ շատ զարմացայ՝ ուրկէ՞ եկեր էր ինծի այդ խօսքը, ո՞ր լսեր էի ... Եւ յիշեցի, ո՛չ, չկրցայ յիշել, պարզապէս ենթադրեցի, որ «նէնէ» Հայկանոյշին պատմած հեքիաթներէն լսած ըլլալու եմ, եւ ... կուշտ ու կուռ խնդացի, միտքով շնորհակալութիւն յայտնելով օրիորդ Անահիտին, որ հարցի չէր վերածած մանկական այդ պոռթկումս:

Երրորդ դասարանի տարին չէի ուզեր որ վերջանար. գիտէի որ յետոյ Հայկազեան պիտի երթայի. Հայկազեանը կը վախճնէր զիս. վստահ էի որ Կիւլպէնկեանի ընտանեկան մթնոլորտը պիտի չգտնէի հոն. ամբողջ տարուան ընթացքին այս վախը խաթարեց Կիւլպէնկեանէն ծնած ամէնօրեայ ուրախութիւնս:

Այսօր սակայն իմ այս դպրոցս կը յիշեմ մեծ-մամայի մը տունին քաղցրութեամբ եւ յիշատակներով:

ՖՈՒԹՊՈՒԼԻ...

Սկիզբ՝ էջ 7

Վերջին անակնկալ կողմէն ՀԱԼԿԱԻ ներդաշնակ խաղարկութիւնը անել կացութեան մատնեցին մրցակից խումբը, որ անձնատուր ըլլալու յստակ նշաններ ցոյց տուաւ: ՀԱԼԿԱԻ նոյն թափով շարունակեց իր երթը, իսկ քիչ անց, վրայ հասաւ միջազգային իրաւարար Ռաշատ Հաուսալիի մրցումի աւարտը հաստատող սուլիչին ձայնը:

Մրցումը վերջ գտաւ ՀԱԼԿԱԻ (1-0) յաղթանակով:

Այսպիսով ՀԱԼԿԱԻ խաղթանակներու ճանապարհը հարթուեցաւ եւ բոլորը բարձր տրամադրութեամբ իրաժեշտ տունին դաշտին:

ԻՄ ԿԻԼՊԵՆԿԵԱՆՍ



Մարուշ Երամյան

Դպրոցիս առաջին օրը չեմ յիշեր՝ ո՞վ տարաւ զիս, կամ ի՞նչ էին տպաւորութիւններս եւ ապրումներս:

Աւելի ուշ կը յիշեմ որ զիս վար, ուսուցչարան կանչեցին եւ քանի մը ուսուցչուհիներ, դեմս նստած, սկսան հարցումներ ուղղել.

– Իրա՞ւ է որ Փարիզ գացեր ես մամայիդ եւ պապայիդ հետ:

Հագիւ կրցայ «Այո» մը փսփսալ, որովհետեւ ուսուցչարան կանչուիլը զիս ահով լեցուցեր էր. այդ ահը կը յիշեմ, թէ եւ չեմ գիտեր թէ ինչ ո՞ւ պետք էր ահով լեցուած ըլլայի, պարզապէս ուսուցչարան կանչուած ըլլալուս համար:

Հաւանաբար որովհետեւ ամէն անգամ որ մէկը ըսեր՝ «Մամադ քեզ կ'ուզէ», ես ահ ու սարսափի կը մատնուէի, «Նորէն ի՞նչ ըրեր եմ, որ պիտի յանդիմանուիմ» մտածելով:

Իմ մանուկի խելքովս մօրս բոլոր ըսածները կ'ընէի, բայց յաճախ կը յանդիմանուէի, ուրկէ բուսած սխալի մը համար, որուն սխալ ըլլալն իսկ գիտցած չէի ըլլար ընդհանրապէս:



Այս «կանչուելուն» սարսափը բաւական երկար ատեն մէջս մնաց:

Ուսուցչուհիները տարբեր հարցումներ կ'ուղղէին, որոնք ընդհանրապէս «Ի՞նչ տեսար» էին:

Բաւական բան կը յիշէի. օրինակ՝ երբ ինքնաշարժով Պուլոյնի անտառին մէջէն կ'անցնէինք, կարճ, ծաղկաւոր լայն փէշով աղջիկ մը կը քալէր երկու տղոց միջեւ. երբ տեսան, որ ես աչքերս շատ մեծ բացած գիրենք կը դիտեմ, երկու տղաքը, կարծես համաձայնած, դարձան եւ երկու կողմէն աղջկան այտերը համբուրեցին ու յետոյ ափերը շարժեցին խնդալով՝ «պայ-պայ», որովհետեւ ես ետեւ դարձած կը շարունակէի բաց բերանով գիրենք դիտել:

Կ'ուզէի ասիկա պատմել ուսուցչուհիներուս, բայց ամչցայ:

Կրնայի նաեւ պատմել թէ որքա՞ն բարձր էր Էյֆելի աշտարակը եւ որքա՞ն լայն էին սիւները եւ ամէնը երկաթով հիւսուած: Վստահ էի, որ օրիորդներս շատ պիտի զարմանային՝ «Երկաթով հիւսուած» պիտի հարցնէին: Բայց հագիւ կը պատրաստուէի այս մասին խօսիլ, երբ կ'երեւի յուսահատ ու թերեւս ալ համոզուած, որ մեր Փարիզ գացած ըլլալը յերիւրանք մըն էր միայն, «հատէ՛, գնա՛» հրահանգեցին եւ իրենք դարձան իրենց շատախօսութեան:

Նախակրթարանի երեք տարիներուն ընթացքին – աւելի բարձր դասարաններ չկային տեղի նեղութեան պատճառով – Կիւլպէնկեան դպրոցը դարձաւ իմ երագած ընտանիքս՝ բազմամարդ եւ բազմադմուկ: Ի՞նչ լաւ էր, հիմա կը մտածեմ, որ այդ օրերուն մեր դպրոցական օրը երկու բաժին ունէր՝ կէսօրէ առաջ, որմէ ետք տուն, ճաշի կ'երթայինք ու ետ կու գայինք կէսօրէ ետքի դասերուն համար: Ժամը չորսին կ'արձակուէինք եւ մինչեւ մեր քունի ժամը շատ լաւ դաս սորվելու ժամանակ ունէինք:

Հիմա ժամերը նեղեց'ր են, որ կէսօրուան երկուքին արձակուող աշակերտները դաս սորվելու ժամանակ չունին եղեր, ինչպէս յաճախ կը լսեմ:

Օր մը ամենայն լրջութեամբ տղուս հարցուցի, թէ արդե՞օք վայրկեանին միջոցը, երկրագունդին դառնալներուն հետ, գիտական բացատրութեամբ մը նեղեց'ր է՝ ինչ որ այսօրուան մէկ վայրկեանն է, մեր օրերուն մէկուկէսն էր թերեւս:

Այդ երեք տարիներէն բազմաթիւ յուշեր չունիմ, բայց ընդհանուր ուրախութեան մթնոլորտ մը կար, որ մինչեւ այսօր կը յամենայ մէջս:

Երբ առաջին դասարան եղայ, սկսանք աստիճաններէն վեր ելլել. մեծցեր էինք եւ մեծերուն երեք դասարանները վերի յարկն էին. պետք էր բարձրանայինք հինգ աստիճան, յետոյ դէպի աջ շարունակէինք բաւական բարձր, մինչեւ դասարան հասնիլը: Ձախի աստիճաններէն հագուադէպ էր որ մէկը ելլէր, կարծես վերը տանիքն էր, ուր երբեմն ամավերջի հանդէսին փորձերը կ'ըլլային:

Մանկական քաղցրագոյն յուշերուս մէկն է «Պամայի» պատմութեան գիրքը, որ նուէր ստացեր էի գերագանց աշակերտ ըլլալուս համար եւ որուն վրայ առաջին էջին շատ գեղեցիկ ձեռագիրով մը ձօն գրուած է:

Երբ տասնամեակներ ետք կորսուած կարծուած գիրքը ձեռքս ինկաւ, տարօրինակ յուզում մը եւ խորունկ ուրախութիւն մը ապրեցայ, թէ անոնց աղբիւրը յստակ չէ ինծի համար, բայց ընդհանուր մթնոլորտի մը՝ ուրախ եւ հանգիստ, քաղցր արձագանգն է հաւանաբար:

Օր մը, տակաւին ուսուցչուհին չէր մտած դասարան, իսկ աշակերտները կը շարունակէին զբօսանքի իրենց պոռչտուքը: Զանի մը անգամ

Շար.՝ 12 6

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՆՆԱԿԵՆՆԹԱՅ ԵՐԵՒՅԹ

Գ.

Ճորճիկ Ռաստկելէնան

Սուրիոյ ֆութպոլի դաշնութեան որոշումով, «Մումթազ» դասակարգի 1964-1965-ի ախոյեանութեան մրցաշարքը ընթացք առաւ նախապատրաստական աշխատանքներու ակադեմիայի ակադեմիային բաժանմունքներու դասաւորումէն ետք:

«Մումթազ» դասակարգի 11 խումբերը բաժնուցան երկու բաժնի՝ հիւսիսային եւ հարաւային:

Ա- Հիւսիսային բաժինը հետեւեալ հինգ խումբերէն կը բաղկանար. – ՅՄԸՄ եւ Ահլի (Հալէպ), Ղազի (Տեր Չօր), Հասաքէ (Հասիէ) , ալ ճալաա (Լաթաքիա):

Բ-Հարաւային բաժինը հետեւեալ վեց խումբերէն կը բաղկանար. – ալ ճէշ, ալ Ահլի, Զասիուն, ալ ճալաա (Դամասկոս), Սայետ ալ Արապ (Համա) եւ ալ Ֆիտաա (Հոմա):

Հիւսիսային բաժնի ՅՄԸՄ - Ահլի մրցումը խիստ կարեւոր եւ վճռորոշ մրցում մըն էր: Յաղթական խումբը պիտի դառնար բաժնի ախոյեան եւ իրաւունք պիտի ունենար մասնակցելու ախոյեանութեան ակադեմիային:

Այս մրցումը եղաւ խիստ հետաքրքրական: Երկու խումբերը պայքարեցան ակադեմիայի տոմսը ապահովելու համար:

ՅՄԸՄ-ի տղաքը պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, լուրջ գործակցութեամբ, ճիգ չխնայեցին յաղթանակը ապահովելու եւ ակադեմիային հասնելու: Անոնք տպաւորիչ խաղարկութեամբ եւ շարունակական կազմակերպուած յարձակումներով վտանգեցին Ահլիին բերող եւ յաջողեցան երկրորդ կիսախաղի 15-րդ վայրկեանին, շնորհիւ եղք. Ճորճիկի նշանակած կողին, փայլուն յաղթանակ մը ապահովել եւ ակադեմիային մասնակցելու իրենց տոմսը ձեռք ձգել:

Հարաւային բաժնի առաջին դիրքը նուաճեց Ճէշի խառն խումբը, որ եւս հասաւ ակադեմիային՝ մրցակից ունենալով ՅՄԸՄ-ի նպատակասլաց կազմը:

Ձեզի կը ներկայացնենք ՅՄԸՄ-ի ախոյեանութեան մրցումներուն արդիւնքը.

1- ՅՄԸՄ-Լաթաքիա (3-0), Հալէպի մէջ՝ ի նպաստ ՅՄԸՄ-ին: Կողերը նշանակեցին Եղբայրներ՝ Սամիր Ֆաքըս, Ճորճիկ Ռաստկելէնան եւ Անդրանիկ Մալեան:


2- ՅՄԸՄ-Ղազի (2-0), Հալէպի մէջ՝ ի նպաստ ՅՄԸՄ-ին: Կողերը նշանակեց եղք. Գեորգ Աւընեան:

3- ՅՄԸՄ- Հասիէ (0-0), Հասիէի մէջ:

4- ՅՄԸՄ- Ահլի (1-0): Կողը նշանակեց եղք. Ճորճիկ Ռաստկելէնան:

Ակադեմիայի երթի մրցումը տեղի ունեցաւ Կիրակի, 14 Մարտ 1965-ին, Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ, իրաւարարութեամբ պր.

եամբ պր. Ռաշատ Հաւաւալիի: Մրցումը եղաւ սպառնիչ, բայց չափազանց հետաքրքրական: Պայքարը երկու խումբերու միջեւ սուր եւ վճռական էր: ՅՄԸՄ-ի տղաքը մրցումի առաջին վայրկեանէն սկսեալ անցան յարձակողականի: Անոնք



ճշգրիտ, արագ փոխանցումներով անակնկալի բերին Ճէշի գօրաւոր կազմը եւ գայն դժուար կացութեան մատնեցին: հաւաքական աշխատանքը, բացարձակ գործակցութիւնը, մասնաւոր յառաջապահ գիծի ներդաշնակ եւ արագ փոխանցումները անել կացութեան մատնեցին հակառակորդ խումբի յետսապահ գիծի խաղացողները:

Ի վերջոյ շարունակական գրոհները արդիւնաւորուեցան, երբ եղք. Ճորճիկ յաջողեցաւ խաղին 15-րդ վայրկեանին, իր անակնկալ հարուածով ցնցել Ճէշի խումբին բերդն ու բերդապահը եւ խաղին արդիւնքը դարձնել (1-0)՝ ի նպաստ ՅՄԸՄ-ի խումբին:

Ճէշի խումբը փորձեց գանազան միջոցներով ճեղքել ՅՄԸՄ-ի յետսապահ պողպատեայ գիծը, սակայն՝ ապարդիւն: Յետսապահ գիծի տղաքը, գլխաւորութեամբ իմբապետ բերդապահ եղք. Անդրանիկ Սիւլիքճեանի, յամառութեամբ պաշտպանեցին իրենց բերդը եւ բոլոր յարձակումները ձախողութեան մատնեցին: Անոնք կազմակերպուած յարձակումներով, արագ եւ ճշգրիտ փոխանցումներով անդադար մատակարարեցին յառաջապահ գիծի եղբայրները, որոնք իրենց կարգին մրցակիցը անակնկալի բերին:

ՅՄԸՄ-ի անսման տղաքը դաշտին տերն ու տիրականը դարձան եւ մրցումի տեւողութեան բարձր մակարդակի խաղ ցուցադրելով արժանացան ներկաներու ծափողջոյններուն եւ քաջալերանքին:

Կարեւորութեամբ կը նշեմ, որ Հալէպի ֆութպոլի սիրահար հասարակութիւնը եւս ՅՄԸՄ-ի համակիրներու կողքին, մեծ խանդավառութեամբ հետեւեցաւ խաղին: Պատկերը չափացանց գեղեցիկ ու տպաւորիչ էր:

Շար.՝ 12 6

Պայթումն Մեկուկես Տարի Ետք

«ԱՄԻԿԱ ԻՐԱԿԱՆ ՉԷ, ՉԷ՞...»



Նորա Բարսեղյան

– Ե՛լ, տուն երթանք, ցաւին կը դիմանամ մինչեւ առաւօտ, այն ատեն վիճակը հանդարտած կ'ըլլայ, եւ կարելիութիւն կը ստեղծուի թելիս հարցը լուծելու, քու վերքերդ ալ մակերեսային են...

Գետինը նստած եւ ձախ ձեռքով աչ թելը գրկած հայ ծերունի կին մըն էր, որ ամուսինը կը համոզէր, թէ իր վիճակը ծանր չէ, աւելի լաւ կ'ըլլար, որ մեկնէին տուն: Այսպէս

անուարոյ աթոռ մը, որպէսզի մայրս հոն նստի, մանաւանդ որ արդէն սկսած էր գլխապտոյտ ունենալ եւ անհանգիստ զգալ՝ կորսնցուցած մեծաքանակ արեան իբրեւ հետեւանք:

Քիչ անց կը յանձնարարեն, որ ուղղուինք քովստի սենեակը, կարգը արդէն հասած է մեզի: Երկար նստարանի մը ծայրը կը տեղաւորուի միշտ ապահովելով, որ մայրս չհեռացնեն ինձմէ, առանձին չմնայ,



ալ ըրին, խեղճերը դժուարութեամբ ոտքի կ'ելլեն՝ մէկ մէկու օգնելով ու դուրս կու գան այս խառնարանէն:

Քիչ անց մայրս ալ կը ստիպուի գետին նստիլ, որովհետեւ մեր նստարանը կը տրամադրենք ապակիներէ անդամահատուած երիտասարդուհիի մը. բայց գետինն ալ ապահով չէր, անցնող դարձողներ կը կոխկռտէին անոր ոտքերուն: Կը բռնեմ ձեռքէն եւ գայն կը տանիմ բաղնիք, ուր գտնուող աթոռը յարմար կը նկատեմ՝ մօրս որոշ հանգիստ տալու: Քիչ անց կու գայ հիւանդապահուհին, կրկին կը քննէ մեր վերքերը, մօրս արիւնաթաթախ հագուստը կը հեռացնէ մարմնէն, որպէսզի ստուգէ, թէ վիզէն ու դէմքէն զատ այլ տեղեր վերքեր, պատռուածք ունի՞:

– Դագուստը պէտք է հանենք, մէկը թող տուն երթայ եւ նոր հագուստ բերէ իրեն, – խօսքը ինծի կ'ուղղէ ան:

– Տո՛ւն, ի՞նչ տուն, գնա՛ ու տե՛ս, եթէ տակաւին տուն կայ...

Արագ պատասխանողը մայրս էր՝ արցունքոտ աչքերով, հիւանդապահուհին շուտով չ'ընկալեր ուղղած հարցումին ետին թաքնուած ամբողջ ողբերգութիւնը:

– Զարուբանդ է, – կը փսփսամ:

– Լա՛ւ, լա՛ւ, մի՛ մտահոգուիք, ես հիւանդի յատուկ զգեստ կը բերեմ հիմա իրեն, – կը շշնջայ ան՝ կարծեք փորձելով նման հարցում ուղղած եւ մեր ապրած մոճականքին մէկ այլ դառն էջը բացած ըլլալուն մեղքը քաւել:

Այդպէս ալ կ'ընէ, կը բերէ նաեւ

թէն այս համատարած ցաւին ու ողբերգական վիճակին մէջ մեր մօտ փութացած լաւ ու անկեղծ ընկերներու եւ բարեկամներու ներկայութիւնը, հակառակ անոնց աչքերուն մէջ քարացած բացայայտ զարմանքին, յուզումին ու տխրութեան, յոյս ու գոհունակութիւն կը ներշնչէ, կը զօրացնէ, ապահովութիւն կը սերմանէ...

Կը դիտեմ բժիշկներն ու հիւանդապահները, որոնք անդադրում հեւքի մէջ են, կը փորձեն իրենց լաւագոյնը ընել՝ նուազագոյն կարելիութիւններով եւ ահաւորագոյն կացութիւններով մէջ: Բժիշկ մը՝ կցիչ մը ձեռքին, կը մօտենայ ինծի, կը հարցնէ, թէ շատ ցաւեր ունի՞մ, թէ կը դիմանամ՞ դէմքի վերքերուն կցուելուն՝ առանց զգայազրկիչի... Պատասխանս, ի զարմանս նաեւ ինծի, կ'ըլլայ դառն ժպիտ մը պարզապէս...

– Չգայագրկիչը սպառեցաւ պարզապէս, ատոր համար կը հարցնեմ, – կը բացատրէ բժիշկը՝ հիւանդապահուհիին յանձնարարելով, որ գտնէ գէթ որոշ չափով զգայազրկիչ, որպէսզի ձեռքիս բաւական մեծ վերքը կարելու ատեն դիմանամ, նաեւ խորհուրդ կու տայ այլ բժիշկի մը օգնութեան դիմել:

Շուրջս կը դիտեմ, որպէսզի ուշադրութիւնս շեղեմ եւ չտեսնեմ, թէ ինչպէ՞ս կցիչը վիզիս, ձեռքերուս, ուսերուս յարաբերաբար փոքր վերքերը կը փակէ, իսկ բժիշկը այդ աշխատանքը կը կատարէ այնքան պարզ ու արագ, որքան ես պիտի ընէի թուղթեր կցած պահուս:

Քիչ անդին գոյգ մը ինծի կը նայի, աղջիկը ոտքը ցաւուցած կը թուի ըլլալ, իսկ երիտասարդը կը շոյթ անոր ձեռքը եւ կը փորձէ դէմքը ուղղել իր կողմը, որպէսզի ինծի նայելով՝ չազդուի, չուզուի, աղջիկը յանկարծ կը փակէ դէմքը եւ կը հեռացնէ նայուածքը ինձմէ... Ուրեմն բաւական վախազդու վիճակի մէջ ըլլալու եմ... Միւս կողմը երկու տղաք՝ մէկը վիրաւոր, կրկին մեր կողմը կը նային եւ կը փորձեն մօրս ջուր եւ զովացուցիչ տրամադրել, որովհետեւ ան սաստիկ գլխապտոյտ կ'ունենայ: Կողքիս՝ անդադար բողբոջ եւ բարձրաձայն գոռացող կին մը, որուն ձեռքին վրայ հագուստն անտեսելի վերքեր կան. մինչ երկու բժիշկներ կը փորձեն իմ վերքերս փակել տարբեր ձեւերով, իսկ ես լռութեան մէջ թաթախուած ու ակռաներս սեղմած պարզապէս կ'աղօթեմ, կ'աղաչեմ, որ Աստուած ուժ տայ ինծի դիմանալու ցաւերուն, կինը կը շարունակէ իր ճչանութիւնը:

– Տե՛ս այս աղջկան վիճակը, ձայնը կը լսե՛ս, տե՛ս ու լուռ մնա՛ քու վերքդ ոչինչ է իրենիւններուն հետ բարդատած, – կնոջ երեսին բարձրաձայն կը պոռայ կնոջ զանգատներէն ա՛լ զգուած բժիշկը՝ գիտ ցոյց տալով:

– Տոկա՛ քիչ մըն ալ, կը փորձենք արագ ակարտել, – առողջ ձեռքս սեղմելով կը փորձէ ցաւերս թէթեւցնել այլապէս ցաւերս թէթեւցնելու ան-

կարող բժիշկը:

Կը նայիմ իրեն, կցիչները հասած են դէմքիս, ճակատիս, աչքերս կ'ուղղեմ այլ ուղղութեամբ եւ աղօթքս, չեմ գիտեր՝ ինչո՞ւ կը շարունակեմ արաբերէնով՝ կողքիս զգալով աստուածային զօրութիւն մը, որուն շնորհիւ կը դիմանամ...

Կ'արձանագրեն մեր անունները, որպէսզի անցնեն պայթումէն վիրաւորուածներու երկար ցանկին, կը փորձեն ձեւով մը ծածկել վերքերս եւ ապաքինում մաղթել:

Մօրս վերքերուն կցուելէն-կարուելէն ետք կ'ուղղուիմ դուրս՝ երթալու քրոջս տունը, սակայն յանկարծ կը յիշեմ, որ մենք երեքով եկանք, սակայն հիմա եղբայրս մեզի հետ չէ:

– Եղբօրս քով պիտի երթամ, չե՛մ երթար տուն, – կ'ըսեմ մեզի տուն տանելու եկած բարեկամիս, որ մեծ դժուարութեամբ կը համոզէ, որ ան վիրահատութեան մէջ է, չեմ կրնար տեսնել զինք, ոչ ալ մնալ քովը, այլ լաւագոյնը պիտի ըլլայ մօրս հետ ուղղուիլ քրոջս տունը:

Կրկին կը դիտեմ շուրջս, կը նայիմ ողբացողներուն, կեանք փրկողներուն, դիակներ փոխադրող բեռնատարներուն, ուր մարդիկ իրենց հարագատները կ'որոնեն... Տակաւին չեմ ըմբռնէր՝ ի՞նչ եղաւ, այս անհաճոյ ֆիլմը տակաւին ինչո՞ւ կը շարունակուի...

(շար. 2 եւ վերջ)

ՍՕ Խաչ Ծրջանային Վարչութիւն
Առողջապահական Յանձնախումբ
ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ
ՍՕ Խաչի դարմանատունը կարիքը ունի լիաժամ աշխատանքով հետեւեալ պաշտօնէաններուն.
1.- Դիւանդներու ընդունման եւ համակարգչային հաշուապահական յայտագիրներու օգտագործման հմտութիւն ունեցող անձի:
2.- Վկայեալ հիւանդապահ-բուժքոյրի:
Դետաքրքրուողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 0967 115286 - 0991 530773:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ
Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբեքյան-Պօղիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան
Զեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբեքյան
Դաշուապահ՝ Յովիկ Պարսումեան
- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ (35)

Արմենակ Եղիայեան

1. Մեր բառարանները

Այսօր հայր Մեսրոպ ճանաչեանի «Ծաղկաքաղ»-ը կը կարդայի, երբ Գրիգոր Զոհրապի գրիչին տակ գտայ **արածաղէմ** («Ճէրանը»), **շիջելափառ** («Վիսպատէն»), **արծաթել** («Եղիա Տէմիրճիպաշեան»), Զապէլ Եսայեանի գրիչին տակ՝ **շրջանկար** («Սիլիհտարի պարտեզները»), իսկ Սուրեն Պարթեւեանի գրիչին տակ՝ **զոշոտող** («Յայուհին») բառերը, որոնց... առաջին անգամ կը հանդիպէի: Ուրեմն հայերէնը այսպիսի բառեր ունի եղեր... Եւ եթէ այո՞, հապա ո՞ր էին ասոնք, մարդ քանի՞ կէտնք պէտք է ապրի, որ գիտնայ այս բաները:

Իսկ գիտնալէ ետք՝ հասկնայ, իւրացնէ ու կիրարկէ գանոնք:

Եւ իբրեւ պարկեշտ ու առաքինի հոսոսո՞ղիմեցի մեր բառարանագիրներուն, իմա՞ Գայայեանին, Ծիգմեճեանին, Տէր Խաչատուրեանին եւ Կռանեանին. իմ վաւերական բառարանագիրներս են ասոնք՝ յարգանքներովս հանդերձ մնացեալ-



ներուն:

***Ճիգ մեճեան ունի հետեւեալները՝

-արածաղէմ – չէնոտ, պիսակաւոր, ծաղկա-հար

-արծաթել – արծաթագօծել, գեղազարդել արծաթի փոշիով

-զոշոտել – կախարդել, հրապուրել, զգլխել (զլխել հանել)

***Տէր Խաչատուրեան ունի՝

-զոշ – գէշ, ամօթալի

Ասոնք եւ այսքան միայն եւ ուրիշ... ոչի՛նչ:

Եթէ պահ մը մտածենք, որ այս չորսին մէջ ամենէն քիչ ծանօթն ու տարածուածը ճիգ մեճեանն է՝ հակառակ իր ակներեւ գերազանցութեան միւսներուն վրայ, – իսկ թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կը պատահին նման բաներ, – ապա կարելի է ըսել, թէ ոչինչ ըսող ու բացատրող **զոշ** բառէն բացի՝ արեւմտահայ ընթերցողը բերուած բառերը մեկ-նաբանելու եւ իւրացնելու պատեհութիւնը ընդմիջտ պիտի չունենայ: Զեր կրնար ունենալ: Եւ ահա օր մըն ալ իր կեանքին մայրամուտին հարց պիտի տայ՝ «*հապա ո՞ր էին ասոնք, մարդ քանի՞ կէտնք պէտք է ապրի, որ ճանչնայ գանոնք*»:

Իսկ Ակադեմիայի քառահատորին մէջ («Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան») ասոնց բոլորը կը գտնուին. անոնք մէջբերուած են ընդհանրապէս մեր յիշած հեղինակներու բնագրերով, երբեմն անելցնելով նաեւ ուրիշ բնագրային օրինակներ՝ արեւմտահայ թէ արեւելահայ

գրողներ:

Անշուշտ նպատակս չարամիտ բաղդատական մը ընել չէ այս երկուքին միջեւ. բոլորս ալ լաւ գիտենք այն գերիշխող առաւելութիւնները, որ վայելած են արեւելահայ բառարանագիրները իրենց գործունէութեան ընթացքին, եւ այն անձուկ պայմանները, որոնց մէջ աշխատած ու արտադրած է արեւմտահայ բառարանագիրը, որ ընդհանրապէս ուսուցիչ է, երբեմն երկրորդ գործ մըն ալ կ'ընէ՝ ի խնդիր հացի, եւ ազատ ժամերուն կը գբաղի նաեւ իր նախասիրութեամբ, որ այս պարագային բառարանագրութիւնն է:

Մինչ արեւելահայը իր բառերը կը քաղէ ընթերցելով հայ ողջ գրականութիւնը՝ արեւելահայ թէ արեւմտահայ, արեւմտահայ բառարանագիրը ընդհանրապէս կ'արտադրէ աչքի առաջ ունենալով զինք կանխող բառարանագիրներուն գործերը, որոնց վրայ կը յաջողի հազիւ քանի մը փշրանք անելցնել իր կողմէ՝ իր ընթերցումներուն ճամբով հաւաքածէն, եթէ կայ այդպիսին:

Աւելին չէինք կրնար ունենալ, պէտք է գոհանալ այսքանով:

Ուրախալին այն է, որ արդի հայ գրասերը իր տրամադրութեան տակ, շնորհիւ «Նայիրի» կայքին, ունի հայ բառարանագրութեան ողջ վաստակը՝ 132 աշխատութիւն, եւ ստեղծի մէկ-երկու հպումով կրնայ մատչել անոնցմէ որեւէ մէկին եւ լրացնել ասոր բացը միւսին լիառատ սեղանէն:

2. Գրաբարն ու արեւմտահայ դպրոցը

Գրաբարը գրեթէ ձեւականութեան համար դասաւանդուած է արեւմտահայ աշխարհիկ վարժարաններուն մէջ, եւ ես չեմ հանդիպած մէկուն, որ գայն սորված ըլլայ այս ճամբով:

Տրամադրելի դասագիրքը եղած է, – ինչպէս ըսած եմ նախորդիւ, – Եղիշէ վ. Դուրեանի «Ընթացք ի գրոց բարբառ»¹ վտիտ աշխատութիւնը, որուն առաջին դասին առաջին նախադասութիւնն էր. «Թգենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում»...: Ուրեմն, լաւագոյն պարագային՝ մեր տղաքը դպրոց ասարտելէ ետք կը յիշէին այս մէկ հատիկ նախադասութիւնը եւ անոր կապուած գունագէղ մանրավէպ մըն ալ, թէ ինչպէս աշակերտ մը ուրումն թարգմանած է «յոյն մը» (**ուրում**՝ թրքերէն յոյն կը նշանակէ):

1984-ին էր, որքան կը յիշեմ, երբ Ազգային ուսումնական խորհուրդը որոշեց մէկ պահ գրաբար անելցնել Միջնակարգի 9-րդ դասարանի ծրագիրին վրայ՝ հետագային գայն անելի գարգացնելու հեռանկարով:

Նոր գինին նոր տիկի մէջ դնելու տրամաբանութեամբ՝ շանացի ժողովական ընկերներս համոզել, որ հրաժարեինք «Ընթացք ի գրոց բարբառ»-էն եւ որդեգրեինք հայր Անդրանիկ Կռանեանի գրաբարի դասագիրքը, որուն ծանօթացած էի նախապէս եւ շատ հաւանած գայն՝ ըստ ձեւի ու բովանդակութեան:

Եւ այդպէս ալ որոշուեցաւ:

Այնուհետեւ առաջին գործ տղաւ կապ հաստատել հայր Կռանեանի հետ, տալ անտիսը ու մանաւանդ վերամուտին ապահովել գոհացուցիչ քանակութեամբ պահեստ մը:

Հայր Կռանեան կրկնակ ուրախութիւն գգաց. նախ՝ աշխատութեան գտած գնահա-

տանքին համար եւ ապա յիշեցուցած ըլլալուս համար:

–Լաւ ըսիր. պահեստս գրեթէ սպառած է, ուրեմն այսօր իսկ վերահրատարակութեան նախաձեռնեմ:

Ինչ մեղքս պահեմ, ես ալ ուրախացայ... պատճառաւ ուրախութեանս համար:

Եւ շուտով լոյս տեսաւ երկրորդ՝ նարնջագոյն կողքով հատորը. առաջինը կապոյտ էր:

Ատեն մը անց իմացանք, որ Զարեհ սրբ. Ազնաւորեան իր կարգին գրաբարի ամբողջական դասագիրք մը կը պատրաստէ՝ երեք հատորով եւ «Դիւրին գրաբար» անունով:



Օր մըն ալ մտերմաբար ինծի յայտնեց, որ պատրաստ է առաջին հատորին ձեռագիրը եւ ինձմէ խնդրեց, որ տպարան տալէ առաջ մէկ մը կարդամ գայն: Կտրականապէս մերժեցի՝ ըսելով, թէ իմ գրաբարագիրութիւնս շատ ջուր կը վերցնէ եւ շատ հեռու եմ դասագիրք մը քննելէ ու կարծիք յայտնելէ: Սակայն շատ պնդեց: Այնքան սիրելի էր ան, որ յօժարեցայ ստանձնել ձեռագիրը եւ մեծ կեդրոնացումով ու բարեխղճութեամբ սկսայ կարդալ գայն:

Ամբողջ հատորին մէջ նկատեցի ընդամենը մէկ վրեպ. ուրեմն շատ հաւանաբար անուշադրութեան հետեւանքով այնտեղ գրուած էր, որ «*յարաբերական դերանունը թիւով ու հոլովով կը համաձայնի յարաբերեալին հետ*»: Մինչդեռ դրացի նպարավաճառն ալ գիտէ, որ ան կը համաձայնի միայն թիւով, իսկ **հոլովով** կը համաձայնի ըստ իր կատարած պաշտօնին՝ ստորադաս նախադասութեան մէջ: Այսքանը գիտնալու համար՝ պայման չէ գրաբարագետ ալ ըլլալ, կանոնը նոյնն է աշխարհաբարի մէջ եւս:

Պէտք էր տեսնել մանկական այն խոր հըրճուանքը եւ երախտագիտական այն ջերմ խօսքերը, որ այնքան առատօրէն շոյալեց նման նկատողութեան մը համար:

Սակայն օրերը դաժան եղան, եւ ան ժամանակ չունեցաւ անելի օգտակար ըլլալու գրաբարի ճամբով, որուն այնքան հմուտ էր: Վասնզի քիչ անց՝ մեր աչքերուն առջեւ մեր ցեղի այդ ազնուագոյն տիպարը սկսաւ մոմի մը պէս հիւծիլ ու ընդհուպ շիջեցաւ:

Իսկ ժամանակ մը ետք դարդեցաւ այդ դասընթացքն ալ:

Եւ այսօր ոչ ոք կը խօսի այլեւս գրաբարի մասին:

¹[Մարդուն] մէկը թգենի մը տնկած էր իր այգիին մէջ:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

ԽՈՅ
Ձեր կայտառութեան շնորհիւ կրնաք կատարել այնպիսի գործեր, որոնք ուրիշներ կը դժուարանան քակի մը հոգիով կատարել:
- 

ՑՈՒԼ
Գաղտնապահ եղէ՞ք եւ ձեր անձնական հարցերն ու գաղտնիքները մի՛ բացայայտէք խոյնիսկ այնպիսի մարդոց, որոնց վրայ մեծ վստահութիւն ունիք:
- 

ԵՐԿՈՒՐԵԱԿ
Բարձր եւ տօնական տրամադրութիւն ունիք այս շաբաթ: Շաբաթավերջին ընտանեկան հանգստաւետ պտոյտի մը մեկնելու առիթ մը պիտի ընծայուի ձեզի:
- 

ԽԵՅՁԵՏԻՆ
Եթէ նոր գործ մը կը փնտռէք ձեր նախընտրած ճիւղին մէջ, աշխատեցէ՞ք նորարար մօտեցումով պատրաստել ձեր կենսագրականը:
- 

ԱՌԻՇ
Շատ հիւրընկալ էք եւ յաճախ ձեր բարեկամներն ու ընկերները խընճոյքի կը հրաւիրէք: Մի՛ չափազանցէք, քանի որ կրնան ձեզ օգտագործել:
- 

ԿՈՅՍ
Այս շաբաթ շատ գործեր ունիք կատարելիք: Ծրագրուած աշխատեցէ՞ք, որ դիւրին ընթանայ ամէն ինչ, իսկ շաբաթավերջին հաճելի ընթրիք մը պիտի վայելէք բարեկամներու հետ:
- 

ԿՇԻՈՔ
Շաբթուան յոգնութիւններէն ետք վերջապէս շունչ մը պիտի առնէք: Բարեկամ մը ձեզ ճաշի պիտի հրաւիրէ եւ շաբթուան տաղտուկները պիտի մոռնաք:
- 

ԿԱՐԻՃ
Ձեր նախասիրած գործերը դիւրութեամբ եւ հաճոյքով կը կատարէք եւ բնաւ յոգնութիւն չէք զգար: Ընկերային կեանքի մէջ ալ՝ միշտ պատրաստակամ էք:
- 

ԱՂԵՂԱՍՈՐ
Շաբթուան նեղացուցիչ աշխատանքները այս շաբաթ իրենց անարտին կը հասնին եւ վերջապէս ձեր հանգիստը պիտի գտնէք:
- 

ԱՅՏԵՂՋԻՐ
Կալուած մը ունենալ կ'ուզէք. այս շաբաթ առիթը պիտի ներկայանայ, միայն արթուն եղէ՞ք, որովհետեւ ձեր ճաշակին յարմար բան մը պետք է ըլլայ:
- 

ՋՐՈՍ
Շաբթուան յոգնութենէն ետք կրնաք լեռ բարձրանալ եւ քիչ մը շունչ առնել. այս ձեռով ձեր հոգեկանը պիտի բարելաւուի եւ ձեր յոգնութիւնը պիտի մոռնաք:
- 

ՁՈՒԿ
Անտրամադիր էք այս շաբաթ եւ ոչինչ ընել կ'ուզէք: Հրաւեր մը պիտի ստանաք, ինչ որ ձեր տրամադրութիւնը պիտի բարձրացնէ:



ՈՐ ԴԱՐՈՒՄՆ ՅԱՌԱՋԱՑԱԾ ԵՆ «ԽԱՋԵՐԸ» ԵՒ ՔԱՆԻ՝ ԼԵՉՈՒՒ ՊԷՏՔ ԷՐ ԻՄԱՆԱԼ՝ ՉԱՆՈՆՔ ՎԵՐԾԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Հայաստան հարուստ է իր գաղտնիքներով եւ այդ պատմութեան մէջ իրենց ուրոյն տեղը ունին խազերը՝ երաժշտութեան սեփական գրութեան նշաններ (տոթագրութիւն): Խազերը մշակուած են VII - IX-րդ դարերուն, ենթադրաբար, բանաստեղծ եւ գիտնական Ստեփան Սիւնեցիի կողմէ: XX-րդ դարու սկիզբը եւրոպացի եւ հայ գիտնականներ սկսած են ուսումնասիրել եւ վերծանել խազերը:

Երաժշտագետները, որոնք աշխատած են վերծանման վրայ ապացուցած են, որ խազերու ստեղծման հիմքը ազգային երաժշտական մշակոյթն է:

Խազագրութիւնը հայ միջնադարեան հոգեւոր երաժշտութեան գրառման համակարգ է: XVI-XVIII-րդ դարերուն ընթացքին խազեր կարդալը աստիճանաբար մոռցուած է, սակայն որոշ տուեալներու համաձայն խազագրութիւնը մասնակի կիրառութիւն ունեցած է մինչեւ XIX-րդ դարու կէտերը: Միջնադարէն պահպանուած են հազարաւոր խազագիր ձեռագիրներ, որոնց մէկ մասը (շուրջ 1000 նմոյշ) կը պահպանուի Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանին մէջ:

Խազագրութեան արուեստը ուսումնասիրած են շարք մը եւրոպացի եւ հայ գիտնականներ՝ Հենրիխ Պեթլըմանը, Ֆրանսուա Ֆետին, Օսկար Ֆլայշըրը, Գրիգոր Գապասաքալեանը, Եղիա Տնտեսեանը, Կոմիտասը եւ ուրիշներ:

Կոմիտաս իր կեանքի ողջ ընթացքին զբաղած է խազերու ուսումնասիրութեամբ: Ան շատ մօտ եղած է խազերու գաղտնիքի բացայայտման, սակայն, աւաղ, անարտին չէ հասցուցած իր առաքելութիւնը:

Ըստ Կոմիտասի՝ խազերու ամբողջական բացայայտման համար, փորձագետը պետք է իմանայ արաբերէն, թրքերէն, պարսկերէն, ինչպէս նաեւ ուսողութիւն եւ այլ յարակից գիտու-

թիւններ: Խազերու վերծանումը կարելոր է ոչ միայն հայ երաժշտութեան, այլեւ միջնադարեան համաքրիստոնեական եկեղեցական երաժշտութեան ուսումնասիրութեան տեսանկիւնէն:

Յաճախ ճարտարապետական կառոյցներու վրայ կարելի է հանդիպիլ խազերով մակագրութիւններու, որոնցմով հայ գիտնականներ փափաքած են յաւերժացնել որեւէ նշանակալի դէպք:

Լեռնային Ղարաբաղի Հաղորդ - Մարտունի ճամբաներու 10-րդ քմ.-ին վրայ կայ իջեւանատուն մը, որուն կամարները կառուցուած են հայկական ասանդակաճարով: Կամարներէն մէկուն վրայ կայ մակագրութիւն մը, որուն համար օգտագործուած են խազեր՝ «*Ես, Ձեզի Վարդս, ժամանել եմ (այստեղ) ամրանը 11.30 (1681 թ.)*»:

Անուան Ծագումնաբանութիւն
Ըստ Հրաչեայ Աճառեանի խազ բառը փո-

Չեշտ	՛	Չեշտ	՛
փուշ	՛	փուշ	՛
բութ	՛	ԴԻԴ	՛
պարոյկ	՛	բեր	՛
երկար	՛	քաշ	՛
սուղ	՛	գլոր	՛
սուր	՛	սուր	՛
թուր	՛	թուր	՛
ծուկ	՛	թաշտ	՛
թաշտ	՛	ծոց բեր	՛
ողորակ	՛	խուճ	՛
խուճ	՛	վերնախաղ	՛
վերնախաղ	՛	ներքնախաղ	՛
ներքնախաղ	՛	բեկկորճայ	՛
բեկկորճ	՛	խոսրովային	՛
խոսրովային	՛	ծնկիկ	՛
ծնկներ	՛	Էկորճայ	՛
Էկորճ	՛	ձայկորճայ	՛
ձայկորճ	՛	դում	՛
խում	՛	փաթութ	՛
փաթութ	՛	քարքաշ	՛
քարքաշ	՛	բուրայ	՛
բուրայ	՛	Ջարկ	՛
գարկ	՛	լերկ	՛
		խաղ	՛
		բարձրահարեր	՛
		վերքաշ	՛

խառնուած է Կովկասեան լեզուներէն եւ կը նշանակէ «գիծ, գիր, ձայնագրական նշան, սիւնի կամ ձեռքի ակօսածն գիծերը, նետի վարի ծայրի ճեղքը»: Նոյն բառէն կու գայ «խազել» բայը, որ կը նշանակէ «գծել» կամ «մարմինը ճղել, ճեղքել»:

Մարզական



Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- ՀԱՄԻՆԻ աղջկանց Ս16-ի խումբը Կիրակի օր իր երրորդ յաղթանակը արձանագրելով 74 - 68 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Յուրիէն:



- Սուրիոյ պասքէթի տղոց Բ. դասակարգի փոխտանական մրցումներուն ՀԵԸ-ի տղոց կազմը յաջողեցաւ երկու առիթներով պարտութեան մատնել մրցակից Նասրը: Երթի հանդիպումը տեղի ունեցաւ Դամասկոսի մէջ եւ ավարտեցաւ 70 - 67 արդիւնքով, իսկ դարձի հանդիպումը դարձեալ ավարտեցաւ ՀԵԸ-ի յաղթանակով՝ 72 - 87 արդիւնքով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԿԱՆՔԻ ԴԱՅՈՒՆՎԱԿԱՆ ԳԱՄԹԱԿԻՐ

Հայաստանի դաժուկային մարզածելի դաշնութիւնը յայտարարեց Աշոցքի մէջ կայացած «Չարագոյ պետութիւններու դաժուկավազքի գաւաթի» խաղարկութեան արդիւնքները: Դաշնութեան մամուլ ծառայութիւնը տեղեկացուց, որ Հայաստանի հաւաքականը գրաւեց առաջին դիրքը: Երկրորդ տեղը զբաղեցուց Լիբանանը, երրորդը՝ Սերպիան:



Աւելցնենք, որ Հայաստանի հաւաքականին կողմէ մետալներ ստացան Թադէոս Պօղոսեան, Սպարտակ Ոսկանեան, Գաթիա Գալստեան, Անժելիկա Մուրատեան, Գարիկ Պարսամեան եւ Աննա Ռաշոյեան:

ՊԵՆՉԵՄԱՆ ԿՐԿՆԵՑ ՏԻ ՍՏԵՖԱՆՈՅԻ, ՊՈՒՇԿԻՆԻ ԵՒ ՌՈՆԱԼՏՈՅԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Սպանիոյ առաջնութեան 27-րդ փուլի մրցումներուն, Ռեալ Մատրիտ 4 - 1 արդիւնքով կրցաւ պարտութեան մատնել Ռեալ Սոսիտատին եւ շարունակել գլխաւորել աղիւսակը: Մայրաքաղաքի խումբի յարձակողական ֆրանսացի խաղացող քարիմ Պենզեման նշանակեց խումբին չորրորդ, իսկ այս տարուան իր անհատական 20-րդ կոլը: Ան անընդմէջ 6-րդ մրցաշրջանն է, որուն ընթացքին Սպանիոյ փոխտանական կը նշանակէ առնուազն 20 կոլ: Արքայական ակումբի պատմութեան մէջ այդ ցուցանիշը ունեցած են Ալֆրետո Տի Ստեֆանօն, Ֆերենց Փուշկաշն ու Զիստիանօ Ռոնալտօն: 27-րդ փուլի ավարտին Ռեալ Մատրիտը 63 կէտով կը գրաւէ աղիւսակին առաջին դիրքը եւ հաստատ քայլերով կ'անցնի դեպի փոխտանական:



ԿՈՒՐՏԻՈՒԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՆՈՐ ԽԱՂԱՑՈՂՆԵՐՈՒ

Անգլիոյ փոխտանական Մանչեսթըր Սիթիի գաթալուծեացի գլխաւոր մարզիչ Բէր Կուարտիլա իր դժգոհութիւնը յայտնելով ըսաւ, որ ընթացիկ մրցաշրջանին կազմը մնաց առանց կեդրոնական յարձակողի: Ան անեցուց. «Ես կը կարծեմ, որ մեզ պէտք է նոր յարձակող: Ես համաձայն չեմ պատասխանատուներու այն կարծիքին, թէ խումբը անելի յաւ կը խաղայ առանց յարձակողի, որովհետեւ մենք կը յաղթենք, բայց երբ մենք չենք յաղթեր, դուք կը հակասեք դուք ձեզ»: Կուարտիլային խօսքը արձանագրեց BBC-ն: Աւելցնենք, որ մանչեսթըրեան ակումբը հետաքրքրուած է Պորիսիա Տորթմոնտի նորակազմի յարձակող Էրլինկ Հալանտի ծառայութիւններով:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 381)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Պահակագուրդ: Առագաստի սին:
- 2- Արժեք: Արժեքի թուանշան:
- 3- Տառի մը հարեանները: Որոշուած գին:
- 4- Վարանիլ: Արու ոչխար:
- 5- Միջնաբերդ: Բաղաձայն տառեր:
- 6- Ձայնակիչ: Թաքուն պայթուցիկ: Հակառակ՝ ցաւի ճիչ:
- 7- Կոմիտաս վարդապետի երգերէն:
- 8- Հաստատական պատասխան: 360: 5008:
- 9- Հակառակ՝ տարածքի միաւոր: Անտեր, անօգնական:
- 10- Չորքտանիներու խումբ: Անաւարտ:
- 11- Տառի մը անունը: Լեւոն Շանթի թատերգութիւններէն. «..... Մարդը»:
- 12- Դատարկ: Խոշոր:


Ուղղահայեաց

- 1- «Նաւը Լեւոն Վրայ» երկին հեղինակը:
- 2- Արական անուն: Շարունակ:
- 3- Զրիստոնէութիւնը Հայաստանի մէջ որպէս պետական կրօնք հռչակելու թուականը: Փետային քոյրը: Սիամանթոյի ծննդավայրը:
- 4- Աղբիւր: Կարճ իմաստակից խօսք: Տարի:
- 5- Տառի մը հարեանները: Հակառակ՝ անձնական դերանուն:
- 6- 24 ժամ: Տարածքի միաւոր: 660:
- 7- Ձայնակիչ: Բնակութեան տեղ: Կրկնուած բաղաձայններ:
- 8- Կեռասի թթուաշ տեսակը: Յարմար: Ամենամեծ ձուկը:
- 9- Իգական անուն: Կրկնուած ձայնաւորներ:
- 10- Անձնական դերանուն: Գոյն մը:
- 11- Տառի մը անունը: Ասացուածքը կ'ըսէ. «Գայլէն վախցողը չի պահեր»:
- 12- Հայերէն ամենամեծ մագաղաթեայ ձեռագիրը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 380)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	յ	ա	ռ	ա	շ	ն	ա	հ	ա	տ	ա	կ
2	ո	ր	ա	կ	ա	կ	ա	ն	ի	ր	ա	
3	վ				ն	ա			տ	կ	ա	ր
4	հ	ե	ր		ա	տ	ե	ա	ն	ն	օ	
5	ա	ր	ո	ւ	ւ	ե	ա	կ		ա	ւ	
6	ն	գ			է	ւ		ն	ա	խ	ա	
7	ն	ա	ն	ր	ա	ն		ն	է	ւ		
8	է	ր	ա	ն	հ	ր	ա	կ		ր	ո	
9	ս	ա	հ	մ	ա	ն	ա	փ	ա	կ	ւ	
10	ն	ա	կ	ա		ւ	ր	ա	կ	ն		
11	ա	ն	կ	ա	ր	ո	ո	ի	ի			
12	մ	ի	շ	ի	ն	ք		ս	ղ	ա	ճ	

ԼՈՒՐԵՐ



ԱՐԵՎԱԿԱԼԻ ԺԱՄԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՀԱԽՏԱՅԵԱԼՆԵՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՂՈՐԹՔ ԲԱՐՁՐԱՅՈՒՅԻՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Երեքշաբթի, 8 Մարտ 2022-ի առաւօտուն, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցին լեցուած էր հաւատացեալներով, որոնք եկած էին Արեւազալի ժամերգութեան մասնակից դառնալու եւ Մեծ Պահքի օրերուն միասնական աղօթք բարձրացնելու առ Աստուած:



Արեւազալի ժամերգութեան հանդիսապետը Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, մասնակցութեամբ՝ Առաջնորդի Օգնական Հոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանի եւ Թեմի քահանայ հայրերուն: Հաւատացեալներուն կողքին արարողութեան ներկայ էին նաեւ Կրթասիրաց Ս. Չեմպերճեան երկրորդ Վարժարանի աշակերտները: «Շողակաթ» երգչախումբը, ղեկավարութեամբ՝ դպրապետ բարշ. Բժշկ. Սարգիս սրկ. Իսկէնեանի, հոգեպարար երգեցողութեամբ համակեց հաւատացեալներուն հոգիները:

Սաղմոսասացութեամբ եւ շարականներու երգեցողութեամբ Մեծ Պահքի խորհուրդը փոխանցուեցաւ հաւատացեալներուն:



«Հրաժարիմք»ի արարողութեամբ հաւատացեալները հրաժարեցան սատանային բոլոր պատրանքներէն եւ գործակիցներէն, ապա դէպի լոյս



դառնալով իրենց հնագանդութիւնը յայտնեցին երկնաւոր Հօր նկատմամբ: Այնուհետեւ կատարուեցաւ հաւաքական խոստովանանքի եւ գոջումի կարգը, որմէ ետք ներկաները եկեղեցւոյ խորհրդաւոր կամարներուն ներքեւ միասնաբար երգեցին «Տէր Ողորմեա»ն, հայցելով Տիրոջ ողորմութիւնը եւ «Տէրունական Աղօթք»ի բառերով զօրացած՝ մեկնեցան եկեղեցին:

Մարինա Զիւլքօշեան-Պօղիկեան

«ԵԱՍՄԻՆ ՈՒ ՍՆՏԵԱՆ-2» ՑՈՒՑԱՅԱՆՂԵՍԻՆ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱԲԱՐՆԵՐԸ ՈՒՇԱԳՐԱԿ ԷԻՆ

Պատերազմէն յոգնած Հալէպի ու հալէպցիները կը շարունակեն ստեղծագործել ու իրենց տաղանդով նոր գոյն տալ քաղաքին: Հալէպցի կիներ մանաւանդ, վերջին տարիներուն զգալի ներդրում կը բերէ հալէպեան արտադրութիւններու զարգացման մէջ ու իր տաղանդը աշխատանքի կը վերածէ:

Ցուցահանդէսին մասնակցեցան նաեւ ՍՕՆ-ի Աշխատանցի,



Ձեռարուեստի եւ «Փեթակ» խոհանոցի յանձնախումբերը, որոնք հրամցուցին հայկական այլազան ասեղնագործութիւններու ընտիր նմոյշներ, ինչպէս նաեւ հայկական ճաշատեսակներ, խմորեղէն եւ պահքի յատուկ ուտեստեղէն:

Սուրիոյ ներքին առեւտուրի նախարար դոկտ. Ամր Նազիր Սալեմի հովանաւորութեամբ եւ Հալէպի առեւտրական պալատի «Գործարար Կիներ» յանձնախումբին կազմակերպութեամբ, Շաբաթ, 5 Մարտ 2022-ին, Հալէպի նահանգապետ



Ցուցահանդէսը այցելեցին պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը եւ այլ ղեմքեր, ինչպէս նաեւ մեծաթիւ քաղաքացիներ: Անոնք բարձր գնահատեցին հալէպցի

պետ Հուսէյն Տիպա բացումը կատարեց «Եասմին Ու Սնտեան-2» վերնագիրը կրող ցուցահանդէսին, որ տեղի ունեցաւ Հալէպի «Շիրաթոն» պանդոկէն ներս:

Ժրաջան կիներ, որ իր դժուարութիւնները աշխատանքով ու ստեղծագործութեամբ որոշած է յաղթահարել:



Եռօրեայ ցուցահանդէսը ընդգրկեց 100 տաղաւար, ուր ցուցադրուեցան այլազան արտադրութիւններ, նպատակ ունենալով խրախուսել հալէպցի արտադրող տիկնոջ արտադրութիւնները, որոնք հակառակ երկրին դժուար պայմաններուն ներկայացուցան քծախ ընդիր աշխատանքով եւ ճաշակաւոր յարդարումով: Սոյն ցուցահանդէս

Մթնոլորտը ճոխ էր եւ խրախուսիչ: Իւրաքանչիւր տաղաւար կը ներկայացներ ճաշակ մը, ստեղծա-



պին իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 10 հալէպահայ կիներ, իրենց կրթաճաշակ եւ իւրայատուկ արտադրութիւններով: Անոնք ներկայացուցին անուշեղէնի, զարդեղէնի, հագուստեղէնի, արծաթեղէնի եւ այլ իրերու ճոխ տեսակակի:

գործական երանգ մը, իսկ հայկական տաղաւարները հայ կնոջ տաղանդը կ'արտացոլացնէին:

Ցուցահանդէսը փակուեցաւ երկուշաբթի, 7 Մարտ 2022-ի երեկոյեան ժամը 8:00-ին:

Մարէն Պապեան-Աղայէկեան